Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

LtD
V 175

1999

ԱԳԼՂԱՐԻՊ

ՄՈՒՍԱ ՊԷՅ

ԵՒ

ԻՒՐ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՂԵՌՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՄ ԵՒ ԻՆԻՆ ՊԱՏԿԵՐ

"Ցրտամեռնելի մ՚ էր, որ կանդրադառնայ բանտի մեջ թատրոնը տեսնելու մ՚էջ, որ ամեն ինչ պարտի եւ կրնայ անդրադառնալ արուեստին եւ անդրադարձակոմեան մոգական գառագանին տակ:"

Վ. ՀԻՒԳՕ

1892

Руссе. Печатница В. „Танупъ"

ԱԳԼՂԱՐԻՊ

ՄՈՒՍԱ ՊԷՅ

ԵՒ

ԻՒՐ ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՂԵՌՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՔ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

Ի ՀԻՆԳ ԱՐԱՐՍ ԵՒ Ի ՄԻ ՊԱՏԿԵՐ

«Տրամը հայելի մ'է, ուր կ'անդրադառնայ բնութիւնն։
Թատրոնը տեսարան մ'է, ուր ամեն ինչ պարտի եւ կրնայ անդրադառնալ արուեստին եւ ներդաշնակութեան մոգական գաւազանին տակ։»
Վ. ՀԻՒԳՕ

1892

Руссе. Печатница В. „Танупъ"

43868-Կ.Հ.

28215-62

Հ§ 181

{125-60}

ՁՕՆ

Ի ՍՐՏԷ

ԱՌ

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՏԻԱՐ

ՓԷՐՀԱԹ Ս. ՓԷՐՀԱԹԵԱՆ

Ի նշան անհոգն զմայլման եւ անկեղծ բարեկամութեան:

ՀԵՂԻՆԱԿՆ

1 ՅՈՒՆՎԱՐ 1882

ՐՈՒՍՃՈՒԳ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կեդրոնական Հայաստանի մէջ կատարուած եղերական եւ սարսափեցուցիչ անցքերն այնքան բազմադիմի են, որոնք 'ի գիր առնելու հատորներ կը հարկաւորին. բայց քանի՞որ բուն Հայաստանի մէջ ապրողներն վայրագ բռնապետութեան մը ծանր լուծին տակ կը հեծեն առանց միջոց գտնելու զանոնք 'ի գիր առնել թերթերով կամ պռոշիւռներով այլ տեղի Ազգայնոց հաղորդելու. կը մնայ մեզ ազատ հրապարակի վրայ ապրողներուս այդ բացն լրացնել ջանալ. մեր ներկայ երկասիրութեան նիւթն Հայ ազատ լրագրութեանց մէջ պարբերաբար հրատարակուած է ժամանակին. բայց այն ճշդութիւնքն որ մենք քաղած եմք հաստատած են մեզ Ողբերգութեանս հերոսներն. եւ այլ վստահելի թղթակիցներ։

Նկատելով միանգամայն թէ մեր առօրեայ կեանքից առնուած իրական թատերգութիւններ մեր մէջ չ'կան. այլ Եւրոպականի թարգմանութիւններ լինելով մեզ համար այնչափ շահեկան չեն եղած. վստահ եմք թէ, մեր ներկայ գործն «ՄՈՒՍԱ ԼԵՌ» պիտի կարենայ այլ ազգային կարող գրագիտաց ձեռնարկել տալ աւելի ընտիրներն նուիրել մեր թշուառ ազգին. եւ վստահ եմ մերայնոց կողմանէ ալ ներկայս սիրալիր ընդունելութիւն պիտի գտնէ. որ իմ վարձատրութիւնս պիտի լինի.

ՀԵՂԻՆԱԿՆ

ԱՆՁԻՆՔ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ՄՈՒՍԱ ՊԷՅ ՊԻՆ ՄԻՐԶԱ	Մչոյ դաշտի բռնաւորը
ՃԷԶԱՅԻՐ ՊԷՅ. ԿԱՄ ՃԱԶՕ	Մուսա պէյի եղբայրը
ԷՕՄԷՐ ՊԷՅ	Մուսա պէյի հօրեղբօրորդին
ԷԹՀԷՄ ՓԱՇԱ	Բաղիչու կուսակալ
ՇԷՅԽ ԷՄԻՆ	» Թուրք կրօնապէտը
ՀԱՃԻ ՏԱՅԻՊ	Կառավարական պաշտօնեայ 'ի Մուշ
ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ	Փարսանք գիւղացի
ԿԻՒԼԻՒԶԱՐ	15 ամեայ Հայուհի բռնաբարեալ Մուսա պէյէ
ԱՂԱՃԱՆ	Կիւլիւզարի հայրը
ԱԼՄԱՍ	» մայրը
Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԱՀԱՆԱՅ	» հօրեղբայրը
ՌԷՍ ՄԻՐՕ	» »
ՅՈՎՍԷՓ Վ. ՍՕԼԱԽԵԱՆ	Սամսոնցի Բաղիչու
ՀԱՄՆՕ	Մուսա պէյի Քուրդ ծառայ-նեակներէ մին
ՄԱԳԹԱՂ	Մուսա պէյի առեւանգեալ մի Հայուհի
ՀԱՅՏԱՐ	Մչոյ կուսակալ Սամսունցի-չայի գաղտնի թղթատարը
ՄԻՐԶՕ	Մուսա պէյի ծառան
ՃԱՖԷՐ	Էթհէմ փաշայի խափշիկ սպասաւորը
ՊԷՔԻՐ ԱՂԱ ՍԻԼԷՅՄԱՆ ԱՂԱ ՄԻՆԱՍ ԱՂԱ ԱԿՈԲ ԱՂԱ	Բաղիչու քաղաքական ժողովոյ անդամք. 'ի կառավարական պաշտօնատան

Թուրք ժանտարմաներ եւ Քուրդեր

ԱՐԱՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

(ՀԱՒԱՏՈՑ ԵՒ ՊԱՏԻՈՑ ՆԱՀԱՏԱԿԸ)

Տեսարանը կը ներկայացնէ Մուսա պէյի բնակարանը 'ի Ճինեար գիւղ. արեւելեան ճաշակով զարդարեալ սենեակ մը, խորը դուռ եւ աջ կողմը փոքրիկ պատուհան մը, պատէն կախուած զրահ եւ զէնքեր, բնակարանի կից ախոռատուն մը։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄՈՒՍԱ պէյ ԵՒ ԷՕՄԷՐ Քրդոկն զէնքով դէմ ՝՝ դէմ նստած քրդի մը վրայ։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Ուրեմն պատմէ տեսնեմ, ինչպէս կրցաք յաջողիլ Թիլ գիւղի Հայ քահանայէն առնուլ երկու հարիւր ոսկւոյ գումարը։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Շատ հետաքրքրական է մեր այցելութիւնն 'ի Թիլ գիւղ. երբ Ցերիզակ և Խախրեվ գիւղերը աւարի տալով յաջողութեամբ կը վերադառնայինք Թիլ գիւղի ստորոտէն. Մարնիկցի Հանս մօտենալով ինձ ըսաւ թէ՝ այդ գիւղի մէջ կը գտնուի մի Հայ քահանայ որուն հարստութիւնը կը հաւասարի ամբողջ Մշոյ դաշտի մէջ գտնուած Քուրդ գիւղացւոյ հարստութեան. ես ձիուս սանձը քաշելով կանգ առի, և վայրկեան մը մտածելէ յետոյ պատասխանեցի. Հանս, մեր այսօրուան որսը

կը բաւէ, այդ հաշիւն ալ թողունք մի ուրիշ անդամի. . :

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Անշուշտ բաւական հարստութիւն ձեռքբերած էիք Յերիզակ և Խախրէվ գիւղերի աւարառութենէ։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Մեր այդ կարճատև ասպատակութեան արդիւնքը բաւական գոհացուցիչ է, այդ երկու գիւղերէ կարողացանք ձեռք բերել 3 հարիւրէ աւելի ոչխար, 125 ոսկի և երկու գեղեցիկ Հայ օրիորդներ որոնք հաղիւ լրացուցած են տասն և չորս տարին. քահանայից տունէն սկսելով ամբողջ գիւղի բնակիչներն այր և կին մերկացնելով մի առ մի, ինչպէս ունէին բոլորն էլ առի, միթէ բաւ չէ չորս ժամուան աշխատութեան այդչափ արդիւնք։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Ոչ և է դիմադրութիւն չպատահեցա՞ւ Հայոց կողմանէ, ձեր խմբի դէմ։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Բնաւ, միթէ՞ կարելի է, շնորհիւ Թուրք կառավարութեան յօրինած օրինաց և հակաբռնական ազգերի դէմ տածած խստութիւնները և մեր յաճախակի հարստահարութիւններն ու կողոպտումներն, թողած չեն այդ ժողովրդի մէջ շարժելու կենդանութիւն, գրեթէ գիւակներ են, և արդէն ոչխարի նման շուրջս հաւաքուելով, արտասուալի աչերօք ինձմէ դութ և կարեկցութիւն կը հայցէին։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Է՛հ լաւ, այդ մոռնանք, գանք այժմ Թիլ գիւղի Հայ քահանայի կողոպտելու պատմութեանը. Հանօ ինչ՞ բրաւ երբ դուք նրան բացատրեցիք։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Համբերիր որ պատմեմ. ես առանց կարևորութիւն տալու Հանօի ասածին ձիուս գլուխը դարձընելով բռնեցի ճիշտ գիւղի ճանապարհը, իսկ նա սաստիկ զայրանալով ինձ դէմ. ընտրեց քանի չափ զինաւոր մարդիկ և յարձակեցաւ Թիլ գիւղի վրայ. նկատեցի թէ, անկարելի պիտի լինի Հանօի յարձակումը արգիլել որով ես ալ ստիպուեցայ մի ուրիշ ճամբով դիմաւորել ու միանալ, նրա գոհացում տալու համար։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Է՛հ, ինչ՞պէս սկսաք։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Ինչ՞պէս պիտի սկսինք, արդէն Հանօի դիւցազնական քաջագործութիւնք ծանօթ է ամբողջ Մշոյ դաշտի բնակչաց, նրան անունը լսողին ահ ու սարսափ կ՚ազդէ, և ես այնպէս կը կարծեմ թէ այդ քաջաբաղուկը սատանայէն երկու օր առաջ ծնած լինելու է, զի չ՚կայ մի անձ որ նրա անունը և քաջագործութիւնները չ՚գովէ, տու՛ր, նրա ձեռքը մի նիզակ և մէկ ալ սուր. նա հինգ վայրկենի մէջ հարիւրաւոր մարդ կը փշրէ առանց խնայելու, նա այնպիսի մի վարպետ որսորդ է որ բան նետերը երբէք չեն վրիպիր իրենց նպատակէն. մէկ խօսքով նրա նիզակը զարհուրելի է։

Որով երբ մենք կայծակի արագութեամբ թիլ գիւղը կը մըտնէինք. անհաւատներու կրօնաւորը Տէր Աւետիսը մեզ ընդառաջ ելաւ բարի գալուստ մաղթելով. անշուշտ մեզ մեղմելու բարեմտութեամբ. բայց ես առանց կարևորութեան առնելու նրան ջծնողութիւնները խկոյն երկայն մօրուքէն բռնելով դրամ պահանջեցի, բայց անօրէնը առջի բերան ուրացաւ և աղքատ կեղծեց ինքզինքն, Հանօ, որ անդին կեցած կը լսէր քահանայի խոստովանութիւնը, բարկութեամբ մօտեցաւ քահանային և իւր հրաշագործ այնպի հրացանը ուսէն վար առնելով դրաւ նրա կուրծքին և ըսաւ, հեթանոս շուն, ո՞ը նախամեծար կը համարիս, գնդակահար սատակելդ թէ, սատկներուդ տեղն ըսելը, բայց կծծի կրօնաւորը աւելի սարկական և գծուծ ձևով մը յայտարարեց իւր աղքատութիւնը, ալ իմ համբերութիւնս սպառելով գլուխը սկսայ քարերուն զարնել նա շնչասպառ գետին ինկաւ, նոյն ժամայն նրա երիցուհին վրայ հասնելով սկսաւ աղաչել և խոստանալ թէ ինչոր կը պահանջէք տալու պատրաստ եմք, մենք ալ պատասխանեցինք թէ մեր նպատակն է միայն դրրամ առնել և ոչ այլ ինչ. ահա այն ատեն գնաց երիցուհին և երկու վայրկեանէն վերադարձաւ բերելով իւր հետ երկու հարիւր հատ փայլուն ու կլոր ոսկիները, որնոր կարծես թէ միայն իրեն վայելել արժան տեսած էր, որ այնչափ դժուարաւ կրցանք առնել։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Կեցցես հանօ... երկու հարիւր ոսկի միայն, ալ ուրիշ գործ չ'ունեցա՞ք։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Ցաղեցած ենք արդէն, ի՞նչ գործ ունենայինք. նամանաւանդ թէ ձիերն ալ հոգնած էին. որով գոհունակութեամբ վերադարձանք 'ի ձիւնեաղ գիւղ. ես վայելեցի ոսկիներն. Հանօն ալ իմ համակրանքս։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն + Ե ՄԻՐԶՕ։

ՄԻՐԶՕ. — Տէր իմ, մի անծանօթ Քուրդ եկած է, և կուզէ առանձին ձեզ հետ տեսնուիլ։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Անծանո՞թ մը.... շուտ իմաց. տուր նրա որ աղատ է ներս մտնելու։ (Մէջը կը դնէ)

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Արդեօք ո՞վ լինելու է այդ անծանօթը։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Շատ հաւանական է որ աշիրաթի և կամ մասնաւոր անձի մը կողմանէ խրկուած պատգամ լինի։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Նոյն. ՄԻՐԶՕ Ե ՀԱՅՏԱՐ (ՀԱՅՏԱՐ հրացանն յուսս)

ՄԻՐԶՕ. — Ահաւասիկ տէր իմ։ այն անձը որ քիչ մ'առաջ իմաց տուի ձեզ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Ով՞ ես դու, ո՞ր տեղացի ես և ուսկի՞ց կուգաս։

ՀԱՅՏԱՐ. — (Հրաժանէն դրնոյ) Չեմ կարող առայժմ ձեր այդ հարցմանց պատասխանել, ես հրաման ունիմ միայն առանձին տեսակցիլ ձեզի հետ եթէ կարելի է երկուքնիս առանցնանք։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Լաւ, Միրզա, դուրս ելլ (Մէրզա կը դիմէ)... այս անձնաւորութիւնը իմ հօրեղբօրդիս է, մենք երկուքնիս իրար մի մարմին և մի հոգի եմք, և երբէք իրարմէ գաղտնիք չեմք կարող ծածկել. այժմ ազատ էք խօսիլ ամենայն վստահութեամբ։

ՀԱՅՏԱՐ. — Ես Մշոյ կառավարիչ Ահմէտ փաշայի անձնական թղթատարն եմ։ և փաշայի կողմանէ յատուկ գիր բերած եմ ձեզ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Ինչ՞ է ձեր անունը։

ՀԱՅՏԱՐ. — Անունս է Հայտար պէնի Սէյիտ. ընիկ Մշեցի եմ և ձեր հաւատարիմ ծառան։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Տուր տեսնեմ, փաշայի ղրկած գիրը։

ՀԱՅՏԱՐ. — (Վղէն կախուած կաշէյ պահարանէն նամակ մը դուրս բերելով Մուսա պէյի կուրայ) Ահաւասիկ տեր. պէտք է դիտնաք թէ երկու ժամ միայն հրաման ունիմ այս տեղ կենալու, և ձեզանից ստանալով այդ նամակի պատասխանը հարկ է որ անյապաղ մեկնիմ, զի այդպէս պատուիրուած եմ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Լաւ, այժմ դու գնա՛ մի քիչ հանգստացիր. երկու ժամէն պատասխանը ստանալով կը մեկնիս, (Հայտարը կը դիմէ և Մուսա նամակը կը բանայ և կուրայ էօմէր պէյի) Լ.օմէր պէյ. կարդա տեսնեմ, ինչ կ'ուզէ նորէն այդ անօրէն վաշխառուն։

ԷՕՄԷՐ ՊԷՅ. — (Կարդա նամակը և կ'սկսի կարդալ) — «Մուսա պէյ պէնի Միրզա, Սիրելի կրօնակից, մի քանի ամիսներէ 'ի վեր Մշոյ դաշտի մէջ Հայ գիւղերի վրայ յարձակելով կը հարստահարէք զանոնք, ես ալ համամիտ եմ ձեր այդ ձեռնարկութեանց, զի դուք այդպիսով կատարած կը լինիք Աստուածատաք Մարգարէին պատուէրներն որ պարունակումէ Ս. Ղուրանն, որովհետև հարստութիւն աղատութիւն և երջանկութիւն վայելելն կը վայելէ միայն Ղուրանի հաւատացեալ Իսլամի որդւոց, իսկ անոնք որ թշնամի են մեր հզօր և ճշմարիտ Մարգարէի զաւակաց, նոքա պէտք չէ որ հանդիստ կեանք վայելեն քանի որ մեր նուիրական Ղուրանը կը պատուիրէ թէ անհաւատների ստացուածոց տիրապետելը բանաւոր է. բարի յաջողութիւն կը մաղթեմ։ Մուհամմէտի զօրութիւնը քեզ օգնական լինի. յառաջ վարէ եղբա՛յր, այդ ձեռնարկը. դու Մահմետականի արժանի սրբազան պարտք մը կատարած կը լինիս սոսա, աներկիւղ և ազատ շարունակէ. թիկունք ունենալով զիս. ինչ

որ ալ լինի ես անձնուիրաբար պիտի օգնեմ ձեզ, և հաւատաի եմ իմ դնահատելի ձիռնատուութիւնք ձեր կողմանէ ալ չ'պիտի անտեսուին. ինձ ալ բաժին հանելով յառաջ պիտի վարէք ընդ միշտ այն նուիրական Ս. ձեռնարկն, որոյ համար ուխտած եմ ձեզ չ'խնայել ո՛չ մի ջանք կամ աջակցութիւն ամեն պարագայի մէջ։ Ուստի 'ի նկատի ունելով նաև իմ զոհողութիւնքս ըստ այնմ շարժեցէք, և կը յուսամ որ դուք ևս մի փոքրիկ բաժին կը յատկացնէք ձեր կրօնակից եղբօր. 'ի հաստիկ նամակիս հաճեցէք պատասխանել շուտով և ձեր գիրը յանձնեցէք իմ հաւատարիմ թղթատարիս։„ 13 Յունիս 1888 Մուշ. «Ընդունեցէք իմ ջերմ բարևներս. Ձերդ Ահմէտ փաշա„։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — (Նամակը Էօմերէ յեւէն առնելով) Էօմէր պէյ շուտով գրէ պատասխանը. ահա դեղեցիկ առիթ մը որ ձեռքէ փախցնելու չ'գար, այս կերպով մեր տոհմի փառքը պիտի աւելնայ, և վերջապէս օր մը իմ նպատակիս պիտի հասնիմ։ (Էօմեր ճուղ և բերէ կառնու յեւէը), գրէ՛ Էօմէր պէյ, գրէ՛, — «Բարձրապատիւ տէր. (Էօմեր կ'ուզէ գրել) . . . Ձեր անձնական թղթաբեր. . . Հայտար պէնի Սէյիտի միջոցաւ . . . 13 Յունիս 1888 թուակիր պատուական նամակդ ստացայ . . . Ձեր բարձրութեան բոլոր առաջարկները իբր ջերմեռանդ հաւատացեալ Ս. գրքի . . . և երանելւոյն Մէհ-

մէտի սիրով և լիովին կ'ընդունիմ. . . քիչ օրէն երկու հարիւր սակուց փոքրիկ գումար մը . . . կ'ուղարկեմ ձեզ. իմ մասնաւոր գործակատարիս հետ . . . և կ'աղաչեմ որ բարեհաճիք ընդունիլ զայն . . . կը յուսամ թէ Բաղիշու կառավարիչ Էթհէմ փաշայի ալ օգնութեանց կ'արժանանամ... Ձեր միջոցաւ . . . է՞. բաւական է Էօմէր պէյ (Իւր գրէլը ուլուվ) առէք կնիքս և կնքեցէք (Էօմեր նամակը կը գրէ և Մուսայի կուտայ). Ահ, եթէ Բաղէշի կառավարիչ Էթհէմ փաշայի մօրուքն ալ մի անգամ ափիս մէջ առնեմ; ահա այն ատեն պիտի կարենամ յաջողիլ կազմել մի Քրդական իշխանութիւն ամբողջ Մշոյ գաւառի մէջ. եթէ իմ հոգելոյս հայրս Միրզա պէյ՝ իւր կենդանութեանը չի կրցաւ յաջողիլ այդ կազմակերպութեան, թող նրա հարազատ որդին կատարէ նրա փափաքը և գործադրէ իր սիրելի հօր կտակը։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Բայց եթէ մի անգամ յաջողիս ձեռք բերել այս ընդարձակ գաւառի իշխանութիւնն, գիտցիր որ ալ այնուհետև ամբողջ Քրդաստանի բոլոր մեր կրօնակից աշիրաթներ պիտի դան միանան հետզհետէ մեր դրօշակի ներքև։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Անշուշտ այդ բոլորը պիտի լինի. միայն թէ պետք է համբերել և աշխատիլ։

ՏԵՍԻԼ ԶՈՐԲՈՐԴ

ՆՈՅԵՄ ԵՒ ՄԻՐԶՈ

ՄԻՐԶՈ. — Տէր իմ անծանօթ հիւրը կ'աճապարէ երթալու և պատրաստ է ձեր հրամանին։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Իմաց տուր որ դայ (Մէջ կը դէպէ) այս թղթատարն պէտք է մի փոքրիկ նուէր տալ «Թուրքին կաշառ տուր կինը ձեռքէն առ» այս պարագայիս մէջ հարկ է որ նամակը աւելի շուտ և ապահովապէս հասցնէ փաշայի ձեռքը, որովհետև այսպիսիներ երբեմն մեզ ալ պէտք կը լինին։

ԷՕՄԷՐ ՊԷՅ. — Ա՛յ, չա՛տ ճիշտ է։ այս կարգի մարդիկ մեզ ալ կը հարկաւորին, որով քաջալերելը կամ վարձատրելը ապարդիւն չի լինիր։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՅԵՄ ԵՒ ՀԱՅՏԱՐ

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — (Նամակը տալով) Ա՛ռ այս նամակը և ուղղակի փաշա էֆէնտիի ձեռքը յանձնեցէք (Հայտարար կ'առնու նամակը) բարեհաճութիւն միասին։

ՀԱՅՏԱՐ. — Դուք այդ մասին անհոգ եղիք, իմ պարտականութիւնս է, կատարել ինձ յանձնուած պաշտօնը։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — (Մէ ուրիշ ծրար տալով Հայտարին) Առէք այս ծրարն ալ, իմ փոքրիկ նուէրս թող լինի. փոխարէն ձեր հաւատարիմ ծառայութեան, երբ

փաշայի կողմանէ ուրիշ անգամ ալ խրկուիք իմ մօտ, աւելի մեծ վարձատրութեան պիտի արժանանաք։

ՀԱՅՏԱՐ. — (Կուռնու ծրարը). Շնորհակալ եմ Տէր իմ. այսու առթիւ երախտապարտ կը մնամ ձեզ և եթէ անհաւատարիմ գտնուիմ իմ պաշտօնիս մէջ, թո՛ղ անիծեալ լինիմ մեր հզօր Մարգարէի անէծքով, դուք վստահ եղիք որտիս և որդոյս վրայ. որ երկուքն ալ պատրաստ է ծառայելու միշտ ձեր արիւնաութեանը համար. մնաք բարեաւ։ (Կը դէպէ)

ԷՕՄԷՐ ՊԷՅ, — Ահաւասիկ նպաստաւոր որս մ'ալ. այս կարգի մարդոյ մենք շատ պէտք պիտի ունենանք մեր ապագային կատարելու գործերի համար։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Իմ փափաքս է Բաղդէշի կառավարիչը մի անգամ ձեռք առնել, այն ատեն ապահով եմ որ քիչ ատենէն պիտի յաջողիմք մեծ հարստութեան մը տիրանալ, և միանգամայն կազմել Քրդական իշխանութիւն մի ալ անկէց յետոյ Թուրքի փաշաները. կաշառակեր պաշտօնեայները ամօթահար հեռանան այս երկրէն, Քրդստան Քուրդի իրաւունքն է. մենք պիտի իշխենք այս երկրի, Հայ տարրը զմեզ պիտի ճանչէ իբրեն իշխան և հարկատու պիտի լինի մեզ. այսպէս հասած է ժամանակը. վերջապէս մի [illegible] մահիկը անհետանալով նրա տեղը պիտի ծածանիր

282415-62 (1840.)

ՀԱՅԿ ԳՐԱԴԱՐԱՆ
ЛЕС ЕЛЕРЕНА
ZUYO
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

Ալիի փառաւոր Սուրբ աջը մեր հակայաձև լերանց գագաթի վերայ. եթէ Պէտրիսան պէյ, Ճէլալէտտին և լուսահոգի հայրս Միրզա պէյ Չկրցան յաջողել ձեռք բերել Քրդական իշխանութիւնը. ահաւասիկ նրանց յաջորդը Մուսա. կ'երդնու յանուն Մուհամմէտի, Ալիի, Էօմէրի, Օսմանի և Աբու-Պէքիրի, որ երբէք իր սուրը ձեռքէ չ'պիտի թողու մինչև որ կատարուի իւր փափաքը, վա՛յ անոր որ իմ այս ձեռնարկի համար ինձի դէմ պիտի մաքառի։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Բայց եթէ Շէյխ Մէհմէտ չի համաձայնի ու ընդդիմանայ ձեր այս ձեռնարկի այն ատեն ի՞նչ կարող ես անել։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Շէյխ Մէհմէ՞տ. այն խորամանկ աղուէսը, եթէ մեր ծրագրոյ հակառակ գործէ իմ մէկ հրամանս բաւական է, Հասնս մէկ վայրկենի մէջ կ'անշնչացնէ նրան, բայց լաւն այն է որ նա ալ համաձայնի ու միանայ մեզ։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Պէտք է նախապէս խօստանալ Շէյխ Մէհմէտի ընդհանուր կրօնապետութեան պաշտօնը երբ Քրդական ազատ իշխանութիւն մի կազմուի։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Նախ պէտք է մի քիչ զօրանանք, այն ատեն ես նրա հետ երկար խօսակցութիւն մը պիտի ունենամ, եթէ չընդունի իմ առաջարկներ դիւրին է զնա հանգստացնել Հասնսի

միջոցաւ (Յանկարծ Ներսէն աղմուկ մը կը լսուի. Մուսա և Էօմէր ոտքի կ'ելնեն.) ի՞նչ աղմուկ է այս, արդեօք ի՞նչ պատահեցաւ կանանոցիս մէջ։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

Նոյն և Միրզօ (Մտնելով ճամպարանէն)

ՄԻՐԶՕ. — Տէր իմ մի քանի օր առաջ ձեր բերած Հայ աղջիկները ապստամբելով փայտի կտորներով յարձակեցան ձեր հարէմի վրայ, ներսէն անընդհատ օգնութիւն կ'աղաղակեն. ներքնասենեկի դռներն փակուած լինելով անկարելի պիտի լինի առանց կոտրելու ներս մտնել, ի՞նչ հրաման կուտաք։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Ա՜հ, անիծեալ անհաւատներ, Միրզօ գնա՛ շուտով ջախջախէ դռները և օգնութեան հասիր և այդ ապստամբութեան հեղինակը բռնելով ինձ բեր։

ՄԻՐԶՕ. — Պատրաստ եմ ձեր հրամանը կատարելու։ (Կը դիմէ)

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Եթէ չեմ սխալիր այդ խռովարարը այն Հայուհին է որ ասկից մի քանի օր առաջ Ջալօ Մուրատ և Աբբէնացի Բլաման Մուշահասան գիւղէ անցնելու ատեն հիանալով նրա գեղեցկութեան. կը յաջողին առնանգել և բերել ինձ. այն օրէն ի՛ վեր չեմ կարող զինքը համոզել, նա միշտ կուզէ իր ծնողացը մօտ երթալ, որչա՞փ չար-

չարեցի. ոչ՞փ նախատապի խօսքեր ուղղեցի նրա, մինչև իսկ սպառնացայ իր դրութը կարերա, բայց նա չանսայ, մէկ խօսքով իմ բոլոր զօրութիւնովս ճնշեցի զինքը բայց նորէն անձնատուր չեղաւ և մերժեց սերս, վերջապէս գիտեմ պիտի խոնարհի իմ վրէժխնդիր սրոյս առջև։

ՏԵՍԻԼ ԵՕԹՆԵՐՈՐԴ

(ՄԻՐՋՕ ՄԱԳԹԱՂ ԵՒ Ա՛ՍՈՒՆԴ)

ՄԻՐՋՕ. — (Մ՚ԷՐ՚ԶԻ ՅԵՐԷԲԷ ԲԱՆԱԾ) Ահատակիկ տէր իմ։ Ձեր հարէմի մէջ տեղի ունեցած խռովութեան հեղինակը. կատաղի շան նման յարձակելով ձեր կնոջ՚վրայ, նրա թանկագին զգեստները կը պատռէր և նրա մարմնոյ մի քանի տեղէն ալ վիրաւորուած է փայտի հարուածներով. հազիւ կարողացայ բռնել զինքը և բերել ձեր մօտ. Ցէր իմ ինչ հրաման կ՚ընէք։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Հիմայ ես գիտեմ ինչ ըներ, և կը սրվեցնեմ նրան տիրուհւոյ վրայ ձեռք վերցընելու հետևանքը (ՈՐԷ ԵՐԵՔՈՎ ԿԸ ԲԱՆԻ Մ՚ԷՐ՚ԶԻ ԷՒԿԻՆԵՐԷՑ)։

Ո՞վ տուաւ քեզ այդչափ համարձակութիւն որ յանդգնեցար այդպէս վարուիլ իմ կնոջ հետ, խօսէ՛, եթէ կարող ես արդարացնել քու անձդ։ (ԿԸ ԲՈՐԸ ԷՒԿԻՆԵՐԸ ԵՒ ԿԸ ԴՈՐԻ։)

ՄԱԳԹԱՂ. — Ո՞վ Աստուած. ո՞վ Մշոյ Ս. Կա-

բապետ. Արդարութիւն... միթէ կա՛յ այս երկրի մէջ արդարութիւն, եթէ դա՛ լինէիր մի արդարասէր անձ. եթէ դա՛ լինէիր պաշտպան թշուառ և ողորմելի մարդոց. եթէ դա՛ լինէիր կրսեմ Աստուածամէջ և բարի մարդ. այն ատեն ես չպիտի գտնուէի ձեր ճիրանները մէջ. և ո՞վ տուաւ քեզ իշխանութիւն որ ինձ նման տկար և ողորմելի աբարած մը բանտարկելով քու եղեռաբոյր գառագիպդ մէջ ու չարաչար տանջես. մարդկային էակ մը չէ կարող դիմանալ քու ձեռքով կատարուած բարբարոսութեանց. այս վշտալից ճակատս քանի՞ քանի՞ անգամներ ձեր ոտքերուն առջև խոնարհեցնելով գթութիւն և ազատութիւն հայցեցի. բայց 'ի զուր, երբէք չկարողացայ ձեր գութը շարժել և ձեր քարացած սիրտը մեղմացնել։ (Կ՚ԼԱՅ)

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Լռէ՛ անօրէն, այդ նախատալի խօսքերդ գնա քու ծնօղացդ և ազգիդ դլխուն թափէ, ինչ ըրաւ քեզ Քուրդը, որ կը յանդգնիս նրան նախատել։

ՄԱԳԹԱՂ. — Ինչ՞ ըրաւ՞.. ինչ՞որ ըրիք գնացէք հարցուցէք Մշոյ դաշտի մէջ գտնուած լեռներուն և քարերուն. թող անոնք պատասխանեն ձեզ. վանդի դարերէ 'ի վեր ականատես և ճշմարիտ վկայ են նոքա, ա՜հ. արդէն Հայ տարրի ճակատագիրը անիծեալէ, Հայը իր դարաւոր վրէժները միշտ կը ծածկէ անդիշաչարութեամբ, մենք

որչա՞փ որ կը համբերենք, որչափ հաւատարիմ կը մնանք. դուք ևս առաւել կը սատկացնէք ձեր բարբարոսութիւնները անգթաբար, դեռ կը հարցնէք թէ Քուրդը ինչ ըրաւ մեզի. մտիկ ըրէք ուրեմն, ձեր նախնիքներէ սկսեալ մինչև ձեր օրերը կոտորեցիք մեր երիտասարդները, դուք առևանգեցիք մեր կոյս քոյրերը, դուք պղծեցիք մեր սրբազան աղօթատեղիները և հիմնայատակ կործանեցիք մեր նուիրական վանքերը ու տաճարները, Հայու արիւնով ներկեցիք մեր քաղցր Հայրենեաց գեղազուարճ դաշտերը և վերջապէս Հայու արցունքով շաղախուած հացն է որ դուք այսօր ձեր փորը կը լեցնէք, և դեռ որ մէկը պատմեմ: այն ամենը գիտնալէն վերջ դարձեալ ինձ կը հարցնէք թէ ինչ ըրաւ Քուրդը ձեզի, ահա՛, ինչ որ տեսած և լսած եմ: հաղարին մէկը պատմեցի ձեզ, և ինչ որ ալ ըրած են ձեր պապերը, դայեք հարցուցէք մեր նախնեաց գերեզմաններուն, եթէ կուզէք այս վայրկենիս ինձ ալ սպաննեցէք, գուցէ իմ անմեղ արեամբս զովանայ ձեր դաղանային վայրագ սիրտը։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Լռի՛ր, անօրինի լակոտ. եթէ չես ուզեր իմ բարկութիւնս գրգռել քեզի դէմ: եթէ չես ուզեր իմ վերջնական հրամանս, պէտք է խոնարհիս իմ առջև և ընդունիս բոլոր առաջարկներս։

ՄԱԴԹԱՂ. — Ո՛չ երբէք Մուսա՛, Քրդի հանդէպ առելութիւն մնանող սիրտ մը բնականի հա-

կառակ է Քրդի մը համար բարախէ ու սէր տածէ և յօժարութեամբ անոր թևերուն մէջ նետուի, ոճրագործ Մուսա՛, այդ երազներդ մոռցի՛ր, և մը-տածիր մի անգամ թէ դուն քեզնէ ապիկար ուժերի վրայ կը փորձես քու շահատակութիւնդ և կը ջանաս քու լրութեամբդ անարատ կուսի մը պատիւը բռնաբարել, Հայ անբիծ ճակատ մը քու վատութեամբ պռստեալ ճակատիդ առջև խոնարհեցնել. . . ո՛չ դէթ իմ անզօր բազուկներով ինքդինքս պաշտպանել. և քեզ նման դաւաճանի մը իմ անարատ արիւնովս և զոհաբերութեամբս պատժեմ, լա՛ւ համոզուիր որ այսչափ ժամանակուայ մէջ ո՛չ համոզումներդ ո՛չ նուէրներդ ո՛չ շռայլած խօստումներդ և ո՛չ նոյն իսկ 'ի գործ դրած տանջանքներդ ինձ չկարողացան քո՛ առջև ընկճել, համոզուիր որ յետ այսու ալ նոյնը պիտի տեսնես աւելի սատկութեամբ. ուստի՝ որոշէ շուտով ինձ ազատ պի՞տի արձակես թէ. անմեղ արիւնս խմելով պիտի յագեցնես գազանութեամբ պասքեալ սիրտդ։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Օրիորդ, կը ցաւիմ որ քու գեղեցկութիւնդ և երիտասարդութիւնդ պիտի խամրես Հայի յատուկ յիմար յամառութեամբ. աւելի լաւ է որ ընդունիս Մահմետականութիւնը և երջանիկ կեանք մը վայելես Մուսա պէյի նման մի հզօր մարդու թեւարկութեան տակ. ապու՛շ, շատեր կը փափաքին նրա կին դառնալ երջանիկ ապա-

զայ մ՚ունենալու համար, իսկ դուն անպիտակցու-
բէն և առանց ճաշակելու այն բազդութիւնն զոյն
կ՚արհամարհես. այսօր չվտիթեալ կ՚երևիս, և ինչ՞
խօսելդ չես գիտեր, ինչպէ՞ս քեզ ազատ թողուլ
քանի՞ որ մեր Ս. գիրքը հրաման և պատուէր դը-
րած է մեր վրայ թէ ինչ՞ որ լաւ է գեղեցիկ է,
Իսլամի համար պէտք է լինի. ինչաւոր կամ անշունչ։
Դուն որ մի ինչաւոր գեղեցկութեան հրաշակերտ
մ՚ես, միթէ՞ մենք այնչափ անօրէն անԱստուած
մէկն՝ պիտի լինիմք որ թողնեմք քեզ երթաս մո-
լորուիս և կորուիս անօրէն անհաւատ և մոլորեալ
Քրիստոնէական ազանդին մէջ. չես գիտեր երկընքի
բոլոր բարիքները Մուհամմէտի հաւատացեալներուն
համար պատրաստուած են. իսկ դժոխքի անշէջ հուրն
ու Աստուծոյ բարկութիւնը Իսլամ չեղողներուն
համար։

ՄՈՒՍԱ ԶԷՅ. — Շատ ճշմարիտ է ըսածը, որ-
չափ որ նա մնայ անհաւատութեան ազանդի մէջ
երբէք Փարգի աւուն նրա դիսի վրայէն պակաս
չպիտի լինի հաւատի բերելու համար, մարդս աշ-
խարհ կուգայ ապրելու և երջանիկ լինելու համար,
նա որ կ՚ասէ իր անձը, նա որ կաքօրէն մեռնիլ
կ՚ուզէ բաղդուրանի վարդ ապեստութեան նախնիմ է՝,
խոցալ և խելքի բերել հարկ է, որպէսզի դժոխ-
քի բոցերուն մէջ չարժանանայ։

ՄԱԴԹԱՂ։ — Կը սխալիք, ես ա՛չ չվտիթեալ եմ

և ա՛չ խենթ, գիտեմ զանազանել Քրիստոնէական
Ս. Հաւատի վսեմութիւնն ու Մուհամմէտի աղան-
դի ստորեւութիւնն, միթ՞է կարելի է լոյսը խաւա-
րին հետ փոխանցել, ոսկին անագի կշռով գնա-
հատել, այն որ գիտէ այս երկու կրօնքներուն մէջ
եղած անսահման տարբերութիւնը, այսինքն միոյն
Սրբութիւնն և միւսին պղծութիւնն, իրեն համար
նախամեծար կը համարի Սրբութեան համար զոհ-
ուիլ և նահատակուիլ, քան պղծութեան տիղմե-
րուն մէջ թաթախուիլ. դրախտ և դժոխք բառերը
Իսլամի Մարգարէն բացատրած է ձեզ այնպէս,
ինչպէս չափահաս մարդու մը կոդմանէ հինգ տա-
րեկան տղու մը տրուած խրատներն, Աստուծոյ
ճշմարիտ դրախտը Քրիստոնէական դրախտն է, ուր
ո՛չ պիղծ աղջիկներ կան և ո՛չ ապականուած երի-
տասարդներ, նման ձերինին ուր հաւատացեալ կար-
ծուած Միւսիմանը իր անասնական կիրքը պիտի
յագեցնէ որով մեր դրախտը Սուրբ և անարատ է,
մեր դրախտը հրեշտակները և մարդոց ոգիք կ՚եր-
գեն ու կը փառաբանեն Արարչին տիեզերաց որ ի-
րենց արժանացուցած է, այդ երջանկութեան և մերթ
ընդ մերթ ալ Աստուծոյ տեսութեան պիտի ար-
ժանանան։ Ուստի ես իմ այս դրախտէս չզրկուե-
լու համար յոժարակամ կը զոհեմ անձս, այլ ո՛չ
Իսլամանալով յիմարութիւն կունենամ հաւատալ
ձեր պիղծ կրօնի մոլոր վարդապետութեանցն. ժան՛տ

Քուրդ, իմ սիրտս և հոգիս չեմ կարող գերի ընել այնպիսի մարդու մը որ այնչափ ոճիրներ գործած, հազարաւոր ազգակցայս մահուան պատճառ եղած անիրաւաբար, և այժմ ալ եթէ սպանուիմ գիտցիր որ իմ հոգին արագաթռիչ աղաւնեայ նման պիտի բարձրանայ Աստուծոյ դահոյիցը առջև և իմ արդար փաղաքը պիտի մատուցանէ այն ճշմարիտ Դատաւորին որ ականատես եղած է քու անհամար եղեռնագործութեանցը. և Նա է ճշմարիտ վկայ. զա՛րկ. որչա՛փ որ կարող ես, կոտրէ՛, որչա՛փ որ կամենաս, բայց գիտցիր որ դարձեալ մի օր ա-նոնց հաշիւը պիտի տաս Ամենակալ Արարչին, մի՛ կարծեր թէ անպատիժ պիտի մնաս դու. չես գիտեր թէ արեան պարտքը արիւնով, և պատոյ պարտքը պատուով պիտի վճարուի, ահա՛ իմ վերջնական վճիռը և որոշումը։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Այդ գոռհիկ խօսքերովդ չես կարող ինձ համոզել. ընդհակառակը աւելի կը գրգռես իմ բարկութիւնս քեզի դէմ, մեր կրօնի վարդապետը սուր և կրակ, արիւն ու մահ կը պատուիրէ անհաւատների դէմ, ես ալ հետևող լինելով այդ ճշմարիտ վարդապետութեան պարտաւոր եմ կատարել նրա բարձր ու սուրբ պատուիրանքները և քանի կենդանի մնամ պիտի աշխատիմ ձեր խայտառակ աղանդը և սուտ դաւանանքը ջնջել այս աշխարհի վրայէն. որչա՛փ դարեր որ դեգերեցաք ձեր այդ մոլոր վարդապետութեան բաւիղներին մէջ բաւ է. և այժմ կարգը եկած է ձեզ ուղղափառ ընելու. կը յիշեմ մեր պատմութիւնից թէ՝ շատ ժամանակներ առաջ ձեր պապերը ընդունած են Մահմետականութիւնը որպէսզի հանգիստ և երջանիկ կեանք վայելեն և յետոյ պատճառաւ մը նորէն սկսած են իրենց այժմեան աղանդին ծառայել։

ՄԱԴԹԱՂ. — Մի՛ յիշեցնէր ինձ, մեր անբաղդ ազգի տխուր յիշատակը։ Մեր պապերը բնա՛ւ Խալամի վարդապետութեան հետևած չեն, ձեր այդ ասածը բոլորովին սուտ է, եթէ երբէք եղած են մի քանիներ անոնք ալ բացարձակ համոզմամբ և յօժարակամ չեն եղած. այլ բռնութեանց և կրքերու զոհ չգնալու համար ակամայիս ընդունած են, և նաև Քրիստոնէական ճշմարիտ հաւատոյ վրայ կատարեալ տեղեկութիւն չունենալնուն պատճառաւ ապրելը նախամեծար համարելով իրենց Ս. հաւատի համար զոհուած չեն, ճշմարիտ Քրիստոնեայ Հայերը միշտ իրենց արեան վերջի կաթիլը իսկ խընայած չեն այդ ճշմարիտ եկեղեցւոյ գոյութեանը և պաշտպանութեանը համար, գիտեմ դուք այս ամենը լաւ գիտէք և այդպիսի սուտ պատմութիւններով իմ ազգս և իմ եկեղեցիս աչքէս հանել կը ջանաք բայց կը սխալիք, զի գիտցէք որ ճշմարիտ Հայը միշտ անդրդուելի կը մնայ իւր հաւատին մէջ, ո՛չ սուր և ո՛չ հուր կրնան փոխել և այլ սուտ ու մոլոր վարդապետութեանց դաւանել տալ։

ԷՕՄԷՐ ՊԷՅ. — Եւ դո՛ւ ինչո՞ւ չես ընդունիր Մահմեդականութիւնը, այնչա՞փ բռնութիւն, այնչա՞փ չարչարանք բաւական չեղան դքեզ ուղղութեան բերելու. քու մոլորեալ ճանապարհէդ, միթէ չտեսա՞ր որ քու ընկերուհիներդ բոլորն էլ ընդունեցին ճշմարիտ կրօնքը, անոնք ալ քեզ նման Հայուհիներ չէ՞ին, անոնք ալ կրօնակիցդ չէ՞ին.

ՄԱԳԹԱՂ. — Է՜հ. «Իւրաքանչիւր ոչխար իր տաքէն կը կախուի» կ'ըսէ առածը. եթէ նոքա ընդունեցան ձեր կարծեցեալ ճշմարիտ կրօնքը, իրենց անձի և հոգւոյ համար ես երբէք պատասխանատու չեմ: ամեն մարդ իր անձը պաշտպանելու պարտաւոր է, նա որ իր ազգութիւնը, կրօնքը և պատիւը չէ կարող պաշտպանել նա արժանի է նախատանաց և մինչև իսկ մահու, և ես այնպիսիները առէծքով կը յիշեմ:

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Ահա՛, վերջին անգամն լինելով կ'առաջարկեմ որ ընդունիս իմ առաջարկը և յօժարակամ ինձ անձնատուր լինիս, ապա թէ ոչ այս վայրկենիս պիտի ընդունիս արժանաւոր պատիժդ:

ՄԱԳԹԱՂ. — Ո՛չ, ո՛չ, բնաւ, ամենևին չեմ վախնար քու սպառնալիքէդ, կը կրկնեմ դարձեալ թէ դու մարդասպան և եղեռնագործ մ'ես, ամենայն սիրով կ'ընդունիմ մահը, արդէն ալ և գիշեր կը տանջուիմ (Ի ԺՈՒՆԸ) ահաւասիկ, աներկիւղ կ'երկընցնեմ պարանոցս, քու մէկ անխնայ հարուածդ բաւական է անչնչացնել ինձ, օ՜հ, մի՛գթար, շուտով կատարէ դահճի պաշտօնդ:

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — (Բ-ԷՅ-ՅԱՆ) Միրզա... օրիորդ, դու պէտք է մեռնիս, բայց ո՛չ թէ իմ սրովս:

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

ՆՈՅՆ ԵՒ ՄԻՐԶՕ

ՄԻՐԶՕ. — Պատրաստ ձեր հրամանին:

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Այս վայրկեանիս քեզ կը յանձնեմ այս անհաւատի աղջիկը. առաջնորդէ զինքը դէպի անտառ, և այնտեղ գլխատելով աչ ականջը բեր ինձ. քեզ տեսնեմ մէկ հարուածով պէտք գլուխը զատէս իր մարմնէն առանց աղմուկի պիտի կատարուի ամեն ինչ:

ՄԻՐԶՕ. — Ամենայն ճշգութեամբ կը կատարուի ձեր հրամանը. օ՜հ ուրեմն անհաւատի աղջիկ հետևէ ինձ առանց աղմուկ հանելու:

ՄԱԳԹԱՂ. — (ՁԵՌՔԵՐԸ ԳՈՅՈՒՑԱԾ ԴԷՊԻ ԵՐԿԻՆՔ ԲԷՅՐՈՅՆԵԼՈՎ) Ո՜վ ծէր, մինչև յարդ գործած յանձնացս և մեղացս համար թողութիւն կը խնդրեմ. ահա՛ կ'ապաւինիմ քու ահեղ անուանդ, տու՛ր զօրութիւն իմ տկար անձիս, հաւատոյ և պատուոյ նահատակիս մի՛ զանար վերջին օգնութիւնդ:

ՄԻՐԶՕ. — Ժամանակ չունիմ սպասելու օրիորդ:

ՄԱԳԹԱՂ. — Անիծեալ լինիս Մուսա քու բոլոր ընտանեօքդ (ԱՌՋԼԷՆ ՄՈՒՍԱՆ ԵՒ ԵՊԼԷՆ ԱՆԷՐՋՅՄԲՈՒՅԼ ԿԸ ՀԵՌԱՆԱՆ):

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Եւ թող անիծեալ լինի այն որ պատճառ եղաւ իմ բարկութիւնս գրգռել անմեղի մը դէմ։ ԵՒ հրահրեց կուրծքիս տակ գթութեան տեղ ատելութեան հուրը։

ԷՕՄԷՐ ՊԷՅ. — Հանդարտէ՛, սիրելի հօրեղբօրդի, մի պիղծ Հայուհւոյ համար այդչափ մի վշտանար, մենք կարողենք ձեռք բերել Մագթաղէ աւելի գեղեցիկներ, հրապուրիչ և հրեշտականման աղջիկներ, բաւական է որ մենք ողջենք և բազուկնիս զօրաւոր։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — (Մեկնուելէ) Ո՜հ, ինչ ըրի Աստուած իմ, կարծես խիղճս սկսաւ զիս տանջել։

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՈՐԴ

(Նոյն և Հասնո (հրացան յուսա)

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Ինչ լուր ունիս Հասնո, ու՞ր էիր երկու օրէ՛ի վեր անյայտացար. միթէ՞ նոր արշաւանք մը ունեցար։

ՀԱՍՆՕ.— Երկու օրէ՛ի վեր Ջալօ Մուրատ և Աքչէնցի Ըսալանի հետ շրջագայութեան ելանք Հայոց գիւղերը, որս մը գտնելու նպատակաւ։

ԷՕՄԷՐ ՊԷՅ. — Հասնո, կարծեմ դարձեալ յաջողակ ես այս անգամ՝ ալ որսորդութեանդ մէջ, պատմէ տեսնեմք ինչ գործեցիր այս երկու օրուան մէջ։

ՀԱՍՆՕ. — Ճշմարիտը ըսելով, Մշոյ գաւառի մէջ շատ օգտակար որսեր կան, Արտանք, Խարց, Տաւիսանք, Վարդենիս և Արգանք գիւղերի Հայոց հարստութիւնը բաւական է մեզ. բայց սրանք ձեռք բերելու համար Մուսա պէյի օգնութեան կարօտ ենք, ես ծրագիրը պատրաստած եմ արդէն։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — Պատմէ տեսնեմ, ինչ է քու ծրագիրդ Հասնո։

ՀԱՍՆՕ. — Տէր իմ, առնուազն 50-60 հոգւով բաղկացեալ մի Քրդական խումբ կազմակերպելով ձեր հրամանատարութեամբ պէտք է յարձակիլ քիչ առաջ ասած գիւղերի վրայ, ես աչքէ անցուցի բոլոր Հայ վաճառականները և վաշխառուները, ամենքն ալ իրենց գիւղերի մէջ են, արդէն գուք լաւ գիտէք որ երբ աշունը կը մօտենայ այդ վաշխառուները այն տեղն կը վերադառնան իրենց հայրենիքը, այս առիթը ձեռքէ փախցնելու չի գար, դրամ, թանկագին կերպասներ գեղեցիկ Հայուհիներ առատօրէն մեզ վայելելու համար պատրաստուած։

ՄՈՒՍԱ ՊԷՅ. — (Մեկնուելէ) Դարձեալ գեղեցիկ Հայուհիներ, ա՜հ, այն անմեղ արարածը... Մագթաղը... անիծեց զիս և ընտանիքս, ո՜հ, խիղճս... խիղճս... (Բարձր) Հասնո, այս երեկոյ Էօմէր պէյի հետ գացէք մօտակայ Քրդաց գիւղերը և մեր ծանօթ մարդիկները հաւաքեցէք, այնպէս որ մինչև երեք օրուան մէջ ամենքն ալ պատրաստ գտնուին իմ դրօշակի ներքև, իմ ծանօթ մտերիմներուս ասա-

ցէ՛ք միայն մեր նպատակը, և ըսէ՛ք որ Աստուա պէ՛յ պաշտօնական դիր ընդունած է Մշոյ փաշան և կընքած է դաղանի դաշնակցութիւն մը փաշայի հետ. և ամբողջ մեր զօրութեամբ պիտի արշաւենք Հայ գիւղերի վրայ, Թուրք կառավարութիւնը մեր միջոցաւ պիտի կարողանայ յաջողիլ ակարացնել Հային իւր բարոյական և նիւթական դիմադրէն, այս կէտը լաւ բացատրեցէ՛ք անոնց որ աւելի գրգռուին և զօրանան։

ՀԱՄՆՕ. — Հասեօն իր գործը գիտէ, դուք հանգիստ եղէ՛ք. ես պիտի կազմակերպեմ մեր խումբը, դուք միայն հրաման տուէ՛ք, կը խոստանամ Ձեզ թէ երկու ժամուան մէջ տասը Հայու գիւղեր կարող եմ մոխիր դարձնել իր բնակիչներով միասին։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Օ՜ն ուրե՜մն, յանուն Մարդարէի և նրա զօրութեամբ թող երեք օրէն սկսի մեր արշաւանքը, վա՛յ անոր որ Քրիստոնեայ է, վա՛յ անոր կ՚ըսեմ որ չ՚ընդունիր մեր սրբազան և ուղղափառ կրօնքը այդպիսեաց համար պատրաստ է տուր և կրակ։

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Ներս՝ Ի՛ՄԻՐՋՕ

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — (Կը դեռնէ Մէրզէն Ի՛ երեսը կը դարձնէ. Դէկո�է) Ա՜հ. Միրզօն. իսկ աղջիկը. . .

ՄԻՐՋՕ. — Ցէր իմ հանգիստ եղիք պէս, ձեր հրամանը կատարեցի։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Ինչ՞ ըրիր Միրզո։

ՄԻՐՋՕ. — Ինչ՞որ պատուիրեցիք ինձ նոյնը ըրի. մի քիչ աւելի փառաւորապէս ձեր ըսածէն։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — Ինչպէ՞ս։

ՄԻՐՋՕ. — Ինքը որ և է ընդդիմութիւն մի չըրաւ, և ո՛չ մի բառ արտասանեց, մենք երկուքնիս մտներով անտառի խորը, նա աղաչեց ինձ և ըսաւ. «Եթէ մէկ հարուածով անշնչացնես զիս արիւնս հալալ լինի քեզ, իսկ եթէ տանջանօք սպանանես զիս, Աստուծոյ անէծքը գլխուդ վրայ լինի» ահա՛, իւր այս վերջին բառը արտասանելուն չի կարողացայ համբերել և «պիտի՛ լահ» գոչելով դանակը իջեցուցի պարանոցին, գլուխը ինկաւ գետին. տաք արիւնը վազեց և հանգատացաւ, նրա գարշելի դիակը քաշելով փոսի մը մէջ ծածկեցի հողով և վերադարձայ։

ՄՈՒՍԱ. ՊԷՑ. — (Մէկոսէ) Կեցի՛ր, ա՛լ բաւական է. . .

ԷՕՄԷՐ ՊԷՑ. Եւ բնաւ չի ապաչեց քեզ որ ազատ թողուս զինքը։

ՄԻՐՋՕ. — Երբէ՛ք, միայն ասաց «ես սիրով կընդունիմ այս մահը, թող Աստուած դատէ և արդար բարկութեամբ վրէժխնդիր լինի մեղաւորաց և անօրինաց» այսչափ էր իւր արտասանած խօսքերը։

ՄՈՒՍԱ ՊԷՑ. — Միայն իւր հոգին էր մեղաւոր, որ գաղուեցաւ իմ ձեռքը, ա՜հ. որոնս խորը այնպիսի սաեղութեան կրակ մը կը վառի կը բորբոքի որ բոլոր Քրիստոնէից արիւնով անկարելի է որ մարի, դեռ չա՜ս մայրեր պիտի ողբան իմ երեսէս, դեռ չա՜ս հոգիներ պիտի կոչուին իմ պատճառաւ, ա՜հ, Մուսա պէյ ուխտած է որ իր սուրը երբէք ձեռքէն չպիտի թողու, մինչև որ իր ակնկալած փառաց կատարը չբարձրանայ, ինչպէս անցելում, նոյնպէս ներկայիս կատարում, աւերը, և կործանում պիտի լինին մեր կեանքի և ազգային յիշատակները և փառքերը։

ԷՕՄԷՐ ՊԷՑ. — Եւ ո՞վ չէ կարող պարծիլ այսպիսի փառքերի վրայ. լսեցէք Հայեր, մեր սարսափելի խստասրտութիւնք և ըստ այնմ վարուեցէք մեզ դէմ։

ՎԱՐԱԳՈՅԸ Կ'ԻՋՆԷ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

(ԱՆԱՐԱՏ ՊԱՏՈՒՈՅ ԲԻՆԱԲԱՐՈՒՄ)

Տեսարանը կը ներկայացնէ Մշոյ Խարց գիւղի մէջ Ուէս Միրօյի տունը. գիշեր է. երկիրը պատած սպիտակ ձիւնով, տանը մի փոքրիկ լուսամուտէն կ'երեւի կանթեղի աղօտ լոյսը.

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄՈՒՍԱ ՊԷՑ, ԷՕՄԷՐ ՊԷՑ, ՀԱՄՆՕ ԵՒ ԽՐԲԱՆԷՆԷՐՈՎ ԱՃԵՆՆԱԼ ՊԷՆԷԼ ԵՒ ՊՈՒՆԸ ՊԱՐԲՈՒԱԾ։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— (Մէջտեղն դուռը ցաւէցնել) Գոյ է...

ԷՕՄԷՐ ՊԷՑ.— Պէտք է բանալ։

ՀԱՄՆՕ.— Այս ատեն ամենքն ալ խոր քունի մէջ են։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Փորձենք մի անգամ (Դուռը բանալ կ'աշխատի) Ներքնակողմէն շատ ամուր գոցուած է։

ՀԱՄՆՕ.— Ինձ թողէք այդ պաշտօնը, եթէ դըժոխքի դուռ ալ լինի դարձեալ կարող է Համնօն բանալ և ներս մտնել (Դուռը կը բանայ և ներս կը նայի) ալևոր ծերունի մը կը քնանայ այս տեղ։

ԷՕՄԷՐ ՊԷՑ.— Նախ և առաջ պէտք է հանգըստացնել այդ անպիտան ծերունին որպէսզի գործերնիս մի քիչ դիւրացած լինի։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Համնօ, մէկ կողմ կեցիր, ես ա-

ուանց նրա քունը խանգարելու կարող եմ հանգըստացնել (Մո

դրան մէջ կանգնած հրացանը կը կրակէ ծերունուն վրայ։)

ՆԵՐՍԷՆ ԴՈՂԴՈՋՈՒՆ ՁԱՅՆ ՄԸ.— Ա՜հ. օգնութիւն, օգնութիւն զարնուեցայ...

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Ա՛յժմ մանենք, ներքնասենեակը... (Քրդերուն) դուք այստեղ հսկեցէք ճամբաները, ով որ ձեր վրայ յարձակի, անմիջապէս կրակեցէք, քանդեցէք, կոտրեցէք, եթէ մէկը յանդգնի դիմադրել երբէք մի խնայէք, երիտասարդ և երեխայ ամենքն ալ արէ անցուցէք։ (Մոտ, Հանոյ, Էօմէր և 3 Քրդերէր կը մտնեն նոյն ժամայն ներսէն դէպ աղաղակ մ կ'լսուէ)։

ՁԱՅՆ ՄԸ.— Ամենքնիս ալ անձնատուր ենք. ինչ որ կ'ուզէք առէք, բայց խնայեցէք մեր կենաց։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— (Ներսէն) Դուրսելէք ամենքնիդ ալ, ոչոք պիտի մնայ տան մէջ, եթէ ձեր մէջէն մէկը գտնեմ թագնված, վա՛յ անոր, եթէ ձեզանից մէկը փորձէ փախչիլ մեր ձեռքէն թող գիտնայ որ սրով պիտի պատժուի, օն ամենքնիդ ալ կարգաւ դուրս ելէք դատարկ ձեռամբ։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ՏԷՐ ՑԱՐՈՒԹԻՒՆ, ՌԷՍ ՄԻՐՕ, ԱՂԱՃԱՆ, ԱԼՄԱՍ, ԿԻՒԼԻՒՋԱՐ, ՄՈՒՍԱ, ԷՕՄԷՐ, ՀԱՍՆՕ և Քրդեր (Առջևի էջերոյն դէմոտով)։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— (Իր տրբանակ Քրդերուն) Օ՜ն ուրեմն, այժմ ամենքնիդ ալ ներս մտէք, բացէ՛ք դարանները, խորտակեցէ՛ք սնտուկները, մէկ խօսքով ինչ որ ալ անցնի ձեռքերնիդ բոլորն էլ աւարի տուէք (Քրդերը աճապարանոց կը մտնեն) ասացէք ուրեմն, ձեր հարստութիւնը, ձեր դրամները ու՞ր պահած. է՛ք, պէտք է ամբողջովին յանձնէք մեզ. եթէ չէք փափաքիր չարաչար մեռնիք

ՏԷՐ ՑԱՐՈՒԹԻՒՆ.— Կը տեսնէք որ ամենքնիս ալ մերկ ենք, ինչ որ ունիմք, դրամ, զգեստ, ամենքն ալ մեր տանը մէջ են, սիրով կը յանձնենք մեր բոլոր ունեցածը ձեզ միայն թէ ազատ թողուցէք զմեզ։ (Քրդերը կ'ուզեն հեռանալ ետևէն դուռն դուրս հանել ետևէնիր և այլայլ աղաղակներ)։

ՀԱՍՆՕ.— Տէր իմ, մէկդի թող այդ ապուշ կըրօնաւորը. նա եկեղեցւոյ մէջ աղօթելէ ուրիշ բան չգիտէր. Ձեր այդ հարցումները Ռէս-Միրօյի ուղղեցէք, ոսկիների պահպանութիւնը նրա յանձնուած է, նա է որ ամբողջ Մշոյ դաշտի մէջ վաճառականութեամբ կը զբաղի, միայն 24 գիւղերի մէջ մանրավաճառների խանութ ունի, որոնք կը պատկանին այդ անձի. այնպէս չէ՞, Միրօ պատասխանէ՛, ինչո՞ւ լուռ կը կենաս։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ինչ որ ունինք, դրամ, կերպաս, և մանր չարչիի ապրանքներ ամենքն ալ տանս մէջ կը գտնուին, դրամներս փոքրիկ սենեկի անկիւնը գտնուած սնտուկիս մէջ է։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Որչա՞փ դրամ կայ այն մետաղի մէջ։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ճշմարիտը ըսելով չեմ կարող գիտնալ դրամի քանակութիւնը, երբ որ բացուի սընտուկը պիտի տեսնէք։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Լաւ՝, Էօմէր պէյ, գնա՛ դու անձամբ տես։ (Էօմէր կը գնէ։)

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ա՜հ, մայրիկ. իմ նոր շորերն էլ կը տանեն. ըսէ որ թողուն զանոնք, եթէ զրկուիմ անոնցմէ կիւրակէ օր ինչ՞ պիտի հագնիմ ես։

ԱԼՄԱՍ.— Աղջիկս, Մուսա պէյ լաւ մարդ է, աղնիւ է, քու շորերը չի տանիր նա դարձեալ քեզ կը թողու։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (Մէկո՜ւէ) Ա՛յս ինչ՞ գեղեցիկ ապչիկ է, պէտք է տանիլ մեզ հետ. (Բարձր) Ռէս Միրօ, այժմ ասա՛ ինձ ճշմարիտն, երբ քու ամբողջ հարստութիւնդ առնում քու ձեռքէ և քու օճախը բոլորովին մարեմ ինձի դէմ որո՞ւ պիտի գանգատիս, և որտեղ դատ պիտի բանաս։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ես նախ չեմ հաւատար որ Մուսա պէյ իմ օճախս մարէ բոլորովին, մենք զքեզ կը ճանաչենք բարի, գթած և ողորմած մարդ, եթէ ձեր ամեն ասած գէշութիւններ կատարէք, եթէ Ռէս Միրօի ամբողջ ընտանիքը մի պատառ հացի կարօտ թողուք, այն ատեն ես պիտի ստիպուիմ իմ երախաներիս տունդը դալ ձեզանից մուրալ, մենք

Մշոյ դաշտի բնակութիւնքս Մուսա պէյէ զատ ուրիշ պաշտպան չունինք, ձեր մեծանձնութեան եմ ապաստանած, ինչպէս ասկից առաջ նոյնպէս ալ այս վայրկենիս ձեր գթութեան և պաշտպանութեան կ՚ապաւինիմ, կատարեցէք ինչ որ ձեզ հաճելի է. կեանք թէ մահ մեզ բաշխեր

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Տէր Ցարութիւն, ձեր կարծիքը ինչ՞է, եթէ քու եղբայր Ռէս Միրօ չ՚բողոքէ ինձի դէմ, դու որո՞ւ պիտի դիմես։

ՏԷՐ ՑԱՐՈՒԹԻՒՆ.— Աստուծոյ, այն արդարադատ դատաւորին որ ո՛չ կողմնակցութիւն գիտէ և ո՛չ ալ կաշառակերութիւն ունի և արդէն քահանայի մը իր թշնամեաց բարօրութեան համար աղօթելէ զատ ուրիշ ի՞նչ բան կը մնայ, մենք պարտաւոր ենք միշտ օրհնել մեր թշնամիները և միշտ խոնարհութեամբ և հեզութեամբ վարուիլ անոնց հետ, ամեն վայրկեան աղօթել ձեր երջանկութեան և արեւշատութեան համար, Աստուածային կամաց անդիմադրելի փոթորկին առջև մարդս միշտ պատրաստ է խոնարհիլ, ես երբէք անխղճօրէն չեմ դատապարտեր զքեզ, չեմ կարող շուրթերս բանալ և անիծել, ազատ էք առնուլ, տանիլ ինչ որ ունինք, մերկացուցէք զմեզ բոլորովին, առէ՛ք այդ անիծեալ հարստութիւնը և ազատ թողուցէք զմեզ. քանի որ ամենքնիս ալ մահկանացու մարդիկներ եմք, մի օր գերեզման պիտի իջնենք, չարժէր որ մարդս չարագործի և ոճ-

բազդի անունը ժառանգէ ու արեամբ և թշուառութեամբ ողողէ խեղճուկ բնակարան մը, չար մարդոյ անունը գժոխքի մշտավառ հնոցի դրան սև տառերով պիտի քանդակուի, իսկ բարի և առաքինի մարդիկ երենց գործերով պիտի վայելեն Աստուծոյ երջանկութեան դրախտը, ահաւասիկ իմ կարծիքը և իմ հաւատքը որ քիչ մ'առաջ հարցուցիք ինձ թէ ինչ պիտի ընեմ և որո՞ւ պիտի բողոքեմ եթէ ձեռնէք մեզ և մեր ընտանեաց։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Պէտք է գիտնաք որ իմ հանդուցեալ հօրս Միրզա պէյի կտակն է այս, որ կը գործադրեմ և ո՞վ կը յանդգնի հակառակիլ իր սրտոյը գէմ որ իւր ձեռացը մէջ կեանք և մահ կը բաշխէ, ձեր այդ աստուածաբանական կարծեցեալ ճառը իմ սրտիս և հոգւոյս վրայ երբէք ազդեցութիւն չ'անէր, Աստուծոյ և Մարդարէի հրամանաւ իմ աչերուս մէջ արցունք չէ քամած, սրտիս տեղ քար դրուած է կուրծքիս տակ, իմ մէկ արհամարհոտ ակնարկս Քրիստոնեան թունաւոր և սուր նետերէն աւելի կը խոցէ մարդոյ սրտերը, գթութիւն և մարդասիրութիւն մի՛ սպասէք ինձմէ այդ բոլորը խորթ են ինձ համար։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Դա՛ք որ մարդկային էակ մ'է՛ք, դա՛ք որ կատարեալ հաւատացեալ մը կը ձեւանաք և վասահ եմք որ կը գթաք տակաւին, դի մենք դեռ բոլորովին յուսահատած չեմք ձեր բարեսրտութենէն։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Ո՞վ կրօնաւոր, 'ի զո՞ր կ'աւաղես դու, կը կարծէք թէ ձեր չոր-քորթ լեզուի խաբուելով իմ ծրագրէս, իմ դիտաւորութենէս ետ պիտի կենամ, ո՛չ երբէք, ես լաւ գիտեմ ստրուկ Հայի բնութիւնը, երբ ասկից հեռանամ արդեօք որչա՞փ նախատինք և անէծքներ պիտի ուղղէք իմ եռեւէս, և ասի բնական է, գերի մը իր սրտի մէջ միշտ կը պահէ վրէժխնդրութեան կայծը։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Քաւ լիցի, ատի կարողէիք ասել երբ խիստ մօտէն ճանաչած չը լինէիք Հայ ազգը և անոր անկեղծ տիրասէր բնութիւնը, և կարծեմ չէք կարող ուրանալ թէ Հայը իր մէջ երբէք չի կրեր դէպ իւր բարերարն կամ տէրն վրէժխնդրութեան ոգի, ինչ որ ալ պատահի նրա և կամ ինչ որ ալ ընեն նրան, այլ լռութեամբ և առանց տրտնջալու յոժարակամ կը տանի հաւատալով թէ ամեն բան Աստուծոյ հրամանաւ կը լինի, ահա՛, այս է Հայի համոզումը։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն։ Էմիր Պէյ և Համնօ (անդրադարձ կը բերէն)

ԷՄԻՐ ՊԷՑ.— Ահաւասիկ Ռէս Միրզի ամբողջ հարստութիւնը, բոլորն էլ ոսկի և արծաթ։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Որչա՞փ կը կարծէք լինի։

ԷՄԻՐ ՊԷՑ.— Մեր փոփաքածէն ալ աւելին դտանք։

ՀԱՄՆՕ.— Համնօն բնաւ չի խաբուիր իր կարծիքի մէջ. ես ճանաչում եմ դրանց բոլորը.

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Էօմէր պէյ, այժմ դու ընտրէ մեր մարդիկներից տասը հոգի որ այդ մնտուկի պարունակութիւնը մի տոպրակի մէջ լեցնելով հէնց այս դիշեր անվտանգ մեր գիւղը տանին, մնացած սընտուկները և այլ իրեղէնները կառքով կամ ջորիով կարող է՛ք փոխադրել։

Էօմէր ՊԷՅ.— Լա՛ւ, այդ պաշտօնը ինձ *թողուցէ՛ք, եկէ՛ք ուրեմն Ջալօ, Պէքիր, Մսթօ բերէ՛ք տոպրակ մը (Կ՚ուզէին լեցնել դրուագները պոպրակի մը մէջ) այժմ դուք ճամբայ ելէ՛ք, մինչև առաւօտուն լուսաբացին պէտք է անպատճառ հասնիք՝ի ձիւնեաղ գիւղ և այնտեղ սպասեցէ՛ք մինչև մեր գալը. լաւ հսկեցէ՛ք, եթէ ճանապարհի վրայ որ և է Եէզիտիների հանդիպիք զգուշացէ՛ք նրանցից։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ձեր հաւատարմութիւնը այս առթիւ վստահաբար պիտի փորձեմ, օ՞ն ուրեմն։

ՀԱՄՆՕ.— Ապահով եղէ՛ք տէր իմ, ձեզի պատկանած իրերի վրայ ո՛չ ոք չի համարձակիր ձեռք դնելու բաւական է որ մի անգամ ձեր անունը լսեն։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Օ՞ն ուրեմն, այժմ հեռացէ՛ք առկից առանց աղմուկի (Քո՛ւրդերէն մի խանդերն առնելով դուրը կը հեռանան) Համնօ, ա՛ռ այս աղջիկը և Ռէս Միրօի կինը հետևէ ինձ։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ա՜հ, ին՞չ կ՚ընես Մուսա պէյ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Պէտք է իմս լինի այս գեղանի Հայուհին։

ԱՂԱՃԱՆ.— Աստուծոյ սիրոյն համար. թող լինէ աղջիկս։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ա՜հ, մայր իմ։ (Մօրը գերեզը կ՚երթայ)

ԱԼՄԱՍ.— Ո՛չ, աւելի լաւ է որ իմ դրկացս մէջ մեռնի, քանթէ անօրինաց ձեռքը մատնուի իմ նաղելի հրեշտակս։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Եթէ առանց դիմադրելու հեռանի՛ք ինձ, կը շնորհեմ ձեր կեանքը, իսկ եթէ փոքրիկ մի դիմադրութիւն ընէ՛ք, կ՚երդնում որ ամենքդդ ալ սրէ կ՚անցնեմ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ձեմ՛ք ընդունիր ձեր անիրաւ առաջարկը, սպանանէ ամենքնիս ալ և մեր դիակները այն ալեւոր ծերունւոյ արիւնաշաղախ դիակին հետ խառնէ, դու որ բարոյապէս և նիւթապէս սպաննեցիր զմեզ, դու որ արատաւորեցիր մեր ընտանեաց անունը ու պատիւը ու քանդեցիր մեր նահապետական օջախը. աւելի շնորհակալ պիտի լինինք եթէ անշնչացնես զմեզ ալ։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ծնողաց գերեզը կը մեռնիմ. . .

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Դու պէտք չէ որ մեռնիս, այլ արժանի ես իմ դրկացս մէջ սէր և երջանկութիւն վայելելու, քեզ նման գողտրիկ արարած մը միթէ չ՚արժէ՞ր որ ինձ նման քաջ մարդու մը կինը լինիս, իմ տանը մէջ դու պիտի դանես այն բոլոր առար-

կաները որ կեանքիդ մէջ չես տեսած և պիտի վայելես այն ամենը, հայրենի տանդ ցնցոտիների տեղ պիտի զարդարուիս մեսաքսեայ կերպասներով և քու սիրուդ մայրդ ալ միասեղ կ'առնեմ որ դուն քեզ անմխիթար չը կարծես, այլ իմ զարդարուն սենեակներուս մէջ ուրախ և հանգիստ կեանք վայելէք։

ԿԻՒԼԻԶԱՐ։— Հովէն տատանող այս խարխուլ տնակն ձեր հարուստ ապարանէն աւելի փառաւոր է և ինձ խօստացած կերպասներէդ աւելի սիրուն են ինձ այս ցնցոտիները չեմ ընդունիր, ո՛չ մի առաջարկդ ինչոր կուզես զայն ըրէ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ա՜հ, չ'կայ արդարութեան պաշտպան մէկը որ զմեզ ազատէ։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Երեսանկեալ կ'աղաչեմ, թող զմեզ այս վիճակի մէջ և հեռացիր, ալ բաւական է այսչափ բարբարոսութիւն, բաւական է այսչա՜փ անդթութիւն, եթէ մեր այս աղաչանաց չես լսեր դու, գիտցիր որ մինչև երկինք բարձրանալով մեր ձայնը արձագանք պիտի տայ, մտածէ անդամմը, միթէ՞ այս տանը մէջ մի պատառ հաց ալ չես կերած, բացարձակ ապերախտութիւն է ըրածդ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ա՜հ, գթա՛յ քահանայի մը ալեւոր մաղերուն, գթա՛յ հասակիս, ո՜վ երկինք ինչ՞ սև է եղեր Հայուն ճակատագիրը որ այսպէս միշտ անընդ անիրաւութեանց խաղալիկ է դարձած, ի՜ցի՜ թէ այս կնճռոտ ճակատս գերեզմանիս մէջ

հանդչած լիներ և չը տեսնէի այս սև ժամերը, եթէ այսչափ պաղատանք և աղերս չ'կրցին շարժել ձեր դութը, եթէ այսչափ արցունք չ'կրցան մարել ձեր պաի բարկութիւնը, չ'ունկնդ ալ ևս ուրիշ բան մ'ըսելու, ինչ՞որ կը կամիս առանց խղճի կարող ես անել։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Իմ որոշումս անփոփոխելի է, պէտք է որ այդ աղջիկը առնիմ։

ՀԱՄՆՕ.— Ա՜յո՛, մեր նպատակը վճռուած է, կը մնայ միայն նրա գործադրութիւնը. (Բռնելով Կիւլիւզարի ձեռքէն) օ՜ն ուրեմն ալ ևս դու Մուսա պէյի կը պատկանիս։

ԿԻՒԼԻԶԱՐ.— (Ձեռ՝ բ՛ռչակելով ոտքերուն և գետնոտած) Սպաննեցէք... կամ աղատեցէք մայր իմ։

ԱՂԱՃԱՆ.— (Վազելով դէպի Հառնօ Բեկն կը տուշէ) Անո՛ւրէն ու՞ր կը տանիս աղջիկս։

ՀԱՄՆՕ.— (Բռունցքէ հարուածով մը) Կորսուէ՛ մէկդի ապա թէ ոչ հիմայ կ'սպաննեմ քեզ։

ԱՂԱՃԱՆ.— Սպանիր, ես մահէն չեմ երկնչիր, որքան մարդոց նախատանքէն։ (Կը փորձէ Հառնօի ոտքը կշտէն առնել Բայց Հառնօ հարուածովը)

ՀԱՄՆՕ.— Հիմայ պիտի տեսնես քու ուր մնալդ (Ա՜ Մուսա) Տէր, հրամայիր որ սպանեմ այս պիղծ շունը։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— (Աղաճանքն Բեկն բռնելով) Ինչ՞ լըրբութիւն է. աղջիկդ սպաննելու չենք տանիր, պատ-

ւայ, փառքի և վայելից դաղաթը պիտի հանի, ինչ միթէ մի անենչան Հայ ինձնէ թանկ կ'արժէ, միթէ՞ ես արժանի չեմ քեզ փեսայանալու, է՞հ, յիմար մարդ որուն փոխանակ քու ձեռքով և յօժարութեամբ աղջիկդ ինձ յանձնելու որ պարծանօք պարծիս թէ աղջկանս շնորհիւ Մուսա պէյին համակրանացը արժանացայ. և այնպիսի մի մեծ մարդու պաշտպանութիւնը կը վայելեմ ըսելու տեղ, լրբաբար կը համարձակիս ըսել թէ այդ աղջիկը քեզ արժանի չէ, ապա որո՞ւ արժանի է։

ԱՂԱՃԱՆ.— Այն Հայ երիտասարդին, որոյ աղջիկս ինքը պիտի սիրէր իւր յօժար կամօք, այլ ո՛չ բռնութեամբ և բարբարոսութեամբ հօրից մօրից զրկուելով քեզ նման դաժանագէմ դազանի մը հանդէպ սէր զգալ ու սիրել և նրա կին դառնալ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (Բրդբբբ՝՝՝) Օ՞ն ուրեմն առէք այս աղջիկը իւր մօր հետ և հեռացէք ինձ, դուն Աղաճան գնա՛ հօրդ թաղումովն զբաղիր։ (Նոխ Մոսա յեպոյ Քորբեր՝՝՝ Ի Աշխարը կը Դէնին։)

ԱՂԱՃԱՆ.— Մա՜հ, մա՜հ սիրելի են ինձ քու ճիրաններդ այս վայրկենի մէջ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Եղբայր իմ մի՛ յուսահատիր այդպէս, Աստուած բարի է, գթած և ողորմած է։

ԱՂԱՃԱՆ.— Ինչպէ՞ս չի յուսահատիմ, ինչպէս չ'արտասուեմ, մէկ վայրկենի մէջ կորսնցուցի ծերունի հայրս, սիրելի ամուսինս և աղջիկս, ալևոր ինձ

համար ողջ ողջ գերեզման իջնելէ զատ ինչ կը մընայ. զրկեցին զմեզ մեր բոլոր հարստութենէն, տարին բոլորն էլ, գոնէ չի թողուցին մեր սիրելիները մեզ որպէսզի գէթ անոնցմով մխիթարուէինք. Այսմաս, ո՜հ, սիրելի ամուսինս, իցի՜ թէ երկուքնիս գրկախառն իջնէինք այն սև գերեզմանը, աւելի գոհ պիտի լինէի քան այժմ կենդանի մնալս։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Մխիթարութիւն եղբայր իմ, մարդուս ամենէն թանկագին բանը իր կեանքն է և մարդս այսպիսի տանջանքներէ պիտի անցնի որ Աստուծոյ հաճելի դառնայ, յիշէ Յոբ երանելին չե՞ս գիտեր։

ԱՂԱՃԱՆ.— (Եբ՝՝՝ՔՔ՝՝՝ԼԴ՝՝՝ԵԼ) Խոստովանիմ և հաւատամ. գիտեմ որ այդպէս է, բայց միթէ բաւ չէ՞ այսչափ դարերէ 'ի վեր մեր պապերու պապերէն սկսեալ մինչև այսօր մեզ տանջելն ու փորձելն, միթէ՞ ալ ուրիշ աշխարհ չ'կայ, միթէ ալ ուրիշ ազգ չ'կա՞յ, թող երթայ ժամանակ մ'ալ անոնց փորձէ, անոնցմով զբաղի, դուք ինձ զուր մխիթարանքներ կը կարդաք, բայց ինչպէս մխիթարուիմ միթէ՞ կարելի է, քանի որ իմ կեանքս նախագաս եմ նրկատած կնոջս ու զաւկիս կեանքն ու պատիւն, ա՜հա՛, այդ կեանքերը խստաս վտանգուեցան և դեռ անգին պատուականագոյն հօրս կեանքը չիջաւ, որոտիս ցաւէն ու կսկիծէն արտասուքս սառեցաւ, զգայարանքներս բթացան, ինչ՞ կը մնայ ընել մեզ

յեա այսու, զուրկ հօրից, ամուսնից, զաւակից, և նոյն իսկ զուրկ ապրելու պայմանից, ոտքերս կթոռեցան, ձեռքերս գոսացան ալ լենձ ապրելու և աշխատելու աղբիւրներս չորացան, ուրեմն ինչ պէտք է անեմ ես աշխարհի վրայ. մահ, քաղցր մահ, ո՞ր ես, ե՛կ, ե՛կ, մխիթարէ թշուառիս։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Կ'աղաչեմ 'ի սէր Աստուծոյ, փարատէ այդ սև մտածումներդ, Աստուած մեծ և ողորմութիւնը անչափ է. քանի դուն յուսահատիս ես պիտի տանջուիմ, դէթ ինձ խնայէ. ես չեմ կարծեր որ աղքատութիւնը երկնից հեգինակութիւն լինի. այլ դժոխոց մէկ անհամ կատակը, յիրաւի սոսկալի է ճոխ և հանգիստ ապրող մարդու մը այսպիսի անակընկալ դիպուածով աղքատանալ և մուրացկանութեան վիճակին հասնիլ, գիտեմ աղքատութիւնը մարդուս անբիծ ճակատը կը նեմայնէ, եթէ կը հաւատանք թէ Արարիչը այնպէս գրած է մեր ճակտին. թող Նրա կամքը օրհնեալ լինի. եթէ այստեղ կը տանջուինք անշուշտ յաւիտենականութեան մէջ պիտի վայելենք երջանկութիւն, ուստի քաջալերուէ և փարատէ այդ մտածումներդ։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ա՛յո՛, կը հաւատամ թէ, այդ ապահով բարօրութիւնը մեր գերեզմանի մէջ պիտի վայելենք միայն։

ԱՂԱՃԱՆ.— Եթէ կայ ճշմարիտ Աստուած մը թող արդար բարկութեամբ վրէժխնդիր լինի։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ա՛յո՛, սիրելի եղբարք իմ ես կը հաւատամ Աստուծոյ արդարադատութեան վրայ, ահա այդ Աստուածն է որ ուշ կամ կանուխ վերջապէս պիտի փչրէ մեր ամբարտաւան թշնամւոյ եղջիւրները, թողունք մեր վրէժը Արարչի ահեղ դատաստանին։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ա՛յժմ ինչ պէտք է ընել մեր ողբացեալ ընտանիքը ազատելու համար Մուսա պէյի ճիրաններէն։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ինչպէս ալ ընենք անօգուտ է, բայց վաղ առաւօտ երթանք Մուշ և փաշային պահանջենք մեր պատիւը և հարստութիւնը։

ԱՂԱՃԱՆ.— Արդեօք պիտի՞ կարենամք յաջողիլ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ա՜հ, ինչ ասեմ, չեմ գիտեր. ես այն համոզումը ունիմ թէ Թուրք կառավարութենէն արդարութիւն յուսալը չորցած ծառէն պտուղ սպասելու կը նմանի, այդ նախապաշարեալ ժողովրդէն հեռի փախչինք, միթէ՞ չէք գիտեր որ Նրանց անհաւատ կրօնաւորները այնպէս կը քարոզեն մահմեդական տարրին թէ Հայու աշխատութեան արդիւնքը հալալ է, պէտք է գրաւել և խլացնել և այդպիսիներէ երթալ գթութիւն և արդարութիւն մուրալը յիմարութիւն է։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Գուցէ այն ատեն աւելի վտանգաւոր լինի մեր վիճակը։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ուրեմն, սպասենք որ նա-

խախտամութիւնը անօրինէ զարժանն. (հեռուէն ոտէ յոյն մը կը լսուի։)

ԱՂԱՃԱՆ.— Ոտքի ձայն մը կայ, (դէպի աջ կողմը դարձնելով) կնոջ մը կը նմանի, դանդաղ դայլերով կը յառաջանայ դէպի մեզ. . . ձեռքերը խաչաձև կուրծքին դրած. . . իւր երկայն գլխակները խառն ձմեռնային սաստիկ քամիէն կը թռչտին. . . ահա կը մօտենայ, կը գողգողայ տերևի նման. . . ա՜հ ճանաչեցի. . . ամուսինս է. . . Ալմասը. . .

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— (Դէպի այն կողմը երթալով) Այո, նոյն ինքն է։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Մինակ է։

ԱՂԱՃԱՆ.— Ահա եկաւ. . .

ՏԵՍԻԼ ՁՈՐԲՈՐԴ

Նոյն և ԱԼՄԱՍ (Ալմաս դողդողալով յեռուերով երեսը ծածկած։

ԱՂԱՃԱՆ.— Ո՜հ սիրելիդ իմ Ալմաս, ինչո՞ւ այդպէս ձեռքերովդ կը ծածկես դէմքդ, ինչո՞ւ կուզես փախչիլ ինձնէ. ա՜հ խօսէ՛, ի՞նչ պատահեցաւ, ու՞ր մնաց սիրելի Կիւլիւզարս, և դու ինչպէ՞ս կը ըլլայ ազատիլ այդ անգութ մարդոյ ձեռքէն. շուտ պատասխանէ սիրելիս։

ԱԼՄԱՍ.— (Լալով) Ի՞նչ կուզես որ պատասխանէ լկեալ և բռնաբարեալ կին մը. որ իւր և ամուսնոյն պատիւը վատ մարդկանց կողմանէ բռնաբարուելէ վերջ կը ներկայանայ իր հաճեստութիւնը կորսնցուցած բոլորովին։

ԱՂԱՃԱՆ.— Արդէն մեր երկրի Քրիստոնեայք իւրեանց պատուոյ տէրը չեն. պատուոյ պաշտպանութեան նախանձախնդիր չեն կարող լինել, սիրելի Ալմաս, այժմ դու այն սա՛ ինձ մինչև ու՞ր տարին զձեզ Քուրդերը. . .

ԱԼՄԱՍ.— Նախ և առաջ ներէ ինձ և ապա հարցուր անցքերի վրայ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ալմաս, այն բանը որ քու հաճութեամբ չէ եղած. ձեր վրայ կատարուած անբարոյականութիւնը անօրինաց ձեռքով բռնութեամբ է գործուած, ահա այս պատճառաւ ձեր ամուսնէ առաջ ես կը ներեմ քեզ և թողութիւն կուտամ։

ԱԼՄԱՍ.— Դուք կը ներէք, բայց խիղճս չի ներէր ինձ. ոչ ասկից յետոյ ես անարժան եմ ձեր մօտ կենալու։

ԱՂԱՃԱՆ.— (Կը քաշէ Ալմասի յեռուը) Սիրելի ամուսինս, մենք պարտական ենք ամեն անգամ միմեանց ներելու, դու իմ թանկարժէքս և սիրելի ամուսինս ես, անկարելի է բաժնուել իրարմէ. եթէ ճշմարիտը կ'ուզես տալի լաւ է որ մենք գրկախառն իջնենք այն սև գերեզմանը, այս անտի աշխարհս տառապանքներէ փրկուելու համար, զի մեր ընտանեաց համար ալ ես կեանք չկայ այսպէս յուսահատ լռիկ մնջիկ պէտք է գլուխ խոնարհեցնենք

մահուան առջև և ամենայն սիրով գրկենք զայն. ահա այս է իրականութիւն մեզ համար։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Արմաս, ո՞ր և որո՞ւ ձեռք թողուցիր Կիւլիւզարը և ինչո՞ւ միայնակ վերադարձար։

ԱԼՄԱՍ.— Ինչ ընէի. ես միայնակ այդ ահագին բազմութեան դէմ, ինչ կարող էի ընել. . . նոքա հրամայեցին որ վերադառնամ, ա՜հ, ակամայ կերպիւ նրանց բոլոր կամքը կատարեցի. . . յետոյ աղաչանօք խնդրեցի որ աղջիկս ալ ինձ յանձնեն, բայց իմ աղաչանքս անլսելի էին և ամենևին ուշադրութիւն չի դարձուցին իմ արտասուաց ու լացին։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Մինչև ո՞ր տեղ գացիք նրանց հետ։

ԱԼՄԱՍ.— Երբ գիւղէն բաւական հեռացանք, չի կարենալով ալևս դիմանալ այնչափ բարբարոսութեանց՝ ինքանք մեծ աղաղակ բարձրացնել որպէսզի աղատ թողուն մեզ. բայց նոքա փոխանակ գթալու, սկսան անգթօրէն մեր երկայն գիսակներէն բռնած բալխիրի նման սառն ձիւնի վրայէն քաշել. մինչև լճակի մօտ տարին, այն տեղ Քուրդերը երկու մասի բաժնուեցան. և սիրելի Կիւլիւզարս ալ առին. նայն տաեն լսեցի նրա վերջին մնաս բարեաւի տխուր ձայնը. ես իսկոյն ուժաթափ ընկայ սառերի վրայ, երկար տաեն անզգայ վիճակի մէջ

մնացի այնտեղ. յետոյ բացի աչերս ակնարկ մը թողուցի շուրջս և ոչոք տեսայ. միայն գիշերային լուսինը հանդարտ կերպիւ կը դիտէր, այն նսեմ և սոսկալի եղելութիւնները որ կատարուեցաւ բարբարոսայ ձեռքով. . . ալ անկից յետոյ ինչ եղաւ հարցուցէք Հայաստանի երկնքի այն գիշերապահ լուսնոյ որ նա ալ արտասուալից աչօք ականատես եղած է։

ԱՂԱՃԱՆ.— Անկից յետոյ երբէք չի լսեցիր ձայն մը և չի դուշակեցիր թէ Քրդաց խումբը ո՞ր կողմ գնացին։

ԱԼՄԱՍ.— Երբ կը շարունակէինք մեր ճանապարհը. Մուսա պէյ իր ընկերների հրամայեց որ երթան Ծնգաղբար գիւղ և այնտեղ գիշերել, խմբի մէկ մասը արդէն առերակ եկեղեցւոյ մօտէն անցնելով կ'երթային դէպի լճակը. բայց յետոյ ո՞ր գացին և ինչ եղան չեմ կարող գիտնալ։

ՏԷՐ ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Ուրեմն [illegible] նոքա այս գիշեր Ծնգաղբար գիւղ գացած [illegible] լինին։

ՌԻՍ ՄԻՐՕ.— Կը հաւնամ Շէյխ Մէհմէտ[illegible]ն հիւր ըլլալու։

ԱԼՄԱՍ.— Եւ այժմ ինչ պիտի ընենք. ինչ պիտի լինի մեր վիճակը. քանդեցին մեր խրճիթը. ինչոր ունէինք բոլորն էլ տարին, տարին նաև իմ սիրելի դուստրս, ա՜հ, մեռնէի և չ'տեսնէի այդ եղելութիւնները. ալ ոսկից յետոյ մեզ համար լաց

[illegible]

ու սուգէ զատ ուրիշ բան չի մնար. ոչոք չպիտի օգնէ մեզ։

ԱՂԱՃԱՆ.— Մեր այս ցաւալի դրութեան ո՞վ կարեւորութիւն կուտայ, ո՞վ կը դիմայ մեր վրայ. ամէն մարդ իր ցաւը ունի առաւելապէս, ապաւինինք Աստուծոյ, համբերութեամբ տանինք ինչոր պատահի մեզ. ահա տեսանք որ մեր թշնամին անդութ է, անտառի վագրը և բորենին աւելի բարեխիղճ են քանիցէ վայրենի Քուրդը.

ԱԼՄԱՍ.— Ա՜հ, ալ չեմ կարող բառ մ'իսկ արտասանել, ամբողջ մարմինս կը դողայ, անբացատրելի տկարութիւն մի կը զգամ (Կը նստի տրոտի մը վրայ)։

ՌԷՍ ՄԻՐՕ.— Ինչ՞ կը լինիս Ալմաս. (Դառնալով դառնէրէն) տեսէ՛ք, շրթունքները կը սառի, դէմքը դալկացեր է բոլորովին։

ԱՂԱՃԱՆ.— (Մօտենալով Ալմասի յետոյէ կը բռնէ) Ամբողջ մարմինը կարծես թէ սառած է. այս գիշերուան դառնաշունչ ցուրտն ալ Քրդերու պակասն ամբողջացուց. ո՜հ, ծանր է վիճակը։

ՏԷՐ ՅԱՔՈՒԹԻՒՆ.— Եղբայր իմ, տարէ՛ք զինքը վառարանի մօտ, կրակի ջերմութենէն նա անմիջապէս պիտի կազդուրուի։

ԱՂԱՃԱՆ.— Մուսա, մարդոյ անէծքը և Աստուծոյ արդար բարկութեան շանթերը քու ազգդ ու կրօնդ անով տեղով շանթահար առնեն և երանի թէ ես տեսնեմ այդ օրը և հանդարտ սրտով գերեզման իջնեմ։

ՁԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ

(ԱՆՄԵՂՈՒՐԸ ԻՆԿԱԾԷ ՎԱՆԴԱԿԻ ՄԷՋ)

Տեսարանը կը ներկայացնէ Ծնգաղբար գիւղի մէջ Մուսա պէյի մասնաւոր բնակարանը. արեւելեան ձեւով զարդարեալ սենեակ մը պատէն կախուած զէնքեր. երկու կողմը փոքրիկ դռներ։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԿԻՒԼԻՒԶԱՐ (Մէնակ նստած տրոտի մը վրայ կը դռնայ)

ԿԻՒԼԻՒԶԱՐ։— (Կը բռնդտիւռէ) Մա՜յր իմ, ա՜հ, մայր իմ, վերջապէս գտած զբեզ. . . (Կ'ուրիննայ) ա՜հ. այս ինչ՞ խարեպատիր երազ էր որ տեսայ. անդութ Մուսայի ձեռքէն ազատուելով սիրելի մօրը գրկացը մէջ լինիլ կը կարծէի, ա՜հ աւա՜ղ. երազներու մէջ կը կորսուիմ եղեր իմ մօտ ոչոք կայ, դարձեալ այս քարեղէն վանդակի մէջ եմ. ո՜վ Աստուած իմ. այս ինչ՞ զուրում էր որ մեր գլխուն եկաւ. ամբողջ գիշերս լեռնէ լեռ և ձորէ ձոր հետիոտն ճամբորդելով վերջապէս հասանք այս տեղ, այս ինչ՞ գիւղ է չեմ գիտեր, արդեօք Հա՞յ են բնակիչները թէ Քուրդ, ասկից ալ ու՞ր պիտի տանին զիս չեմ գիտեր, գուցէ մինչև գերեզմանիս դուռը, այս որչա՞փ անդութ են եղեր այս մարդիկ, կարծես թէ նրանց սիրտը երկաթի պնդութիւն է ստացել, այնչա՞փ աղաչանք, այնչա՞փ աղերս

չի կրցին անդուլթ Մուսայի ապառաժ սիրտը մեղմացնել. երբ իմ աղաւաթիւն կը խնդրէի նա որպէս կաւաղի դաղան վրաս յարձակելով մի քանի ծանր հարուածներ կուտար որպէսզի լռեմ, ինչ ընեմ Աստուած իմ, և որո՞ւ դիմեմ, այս վայրենի մարդիկ ինձնէ պատիւս կը պահանջեն, մինչև վերջին շունչս պիտի մաքառիմ ու անձնատուր չպիտի լինիմ երբէք, թող սպանեն զիս, արդէն ես մեռած եմ, քիչ մ'առաջ Մուսա պէյ առաջնորդեց ինձ այս սենեակը և բանտարկեց զիս իբրև ոճրագործ, և կրկին պատուիրեց որ պատրաստ լինիմ իր պիղծ սէրը վայելելու։ «Այս գիշեր քու մօտը պիտի լինիմ,» ըսաւ նա, ա՜հ երկու օր ևս հրաման խնդրեցի որ աղաւ թողուն զիս. որպէսզի մի քիչ հանգստանամ ու կազդուրուիմ, բոլորովին ուժասպառ եմ եղած, նա չի գթաց իմ թշուառ վիճակիս և կրկին պատուիրեց որ պատրաստ լինիմ և հեռացաւ. (ՈՒԹԷ ԵՒԵԼՈՎ) կարծեմ այս սենեկի դռները գոցուած է (ԴՌՆԵՐԸ ՁԼԼՈՒԵԼՈՎ) այո՛, այս գուռն ալ գոց է, ա՜հ, ինչպէս պիտի ազատիմ այս արիւնարբու դաղանաց ճիրաններէն, արդեօք ծնողքս ինչ վիճակի մէջ են, ես ալ չեմ գիտեր թէ ո՞ւր մնացեմ, նրանց ողբալի վիճակը թէ իմ կեանքս ու պատիւս (ԴՐՍԷՆ ՈՒԹԷ ՅԱՆ ՄԸ) ատրի ձայն մը կը լսեմ, ա՜հ, անշուշտ Մուսան է որ կուգայ գիշերելու իմ մօտ, ո՜վ Ցիրամայր Ս. Աստուածա-

ծին (Ի ՅԱՌԱՋ) Դու որ պաշտպան ես կոյսերուն ահա քեզ կ'ապաւինի անտէր և անպաշտպան աղջիկ մը, որ այս վայրկեանիս քեզանից միայն կը խնդրէ օգնութիւն և մխիթարութիւն (ԱՀ ԿՈՂՄ ԴՈՒՐԷ ԿԸ ՃԱՌԱՅ) ա՜հ, դեռ ո՛չ Մուսա պէյ դեռ ո՛չ . . (ՁԵՌՔԵՐՈՎԸ ԴԷՄՔԸ ԿԸ ՃԱՃԿԷ)

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

ԿԻՒԼԻՒԶԱՐ Ի ՄՈՒՍԱ ՊԷՅ.

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (ՊՏՃԷՃԱՌԸՎ ԿԸ ՏԵՍԵՆԱՅ ԿԷՐԷՐԸՆ) Սիրելի կուլ, ինչո՞ւ այդպէս լուռ և տխուր կը կենաս, և ձեռքերովդ քու գեղեցիկ դէմքդ կը ծածկես ինձնէ ու չես ուզեր ցոյց տալ ինձ. ալևս դու իմս պիտի լինիս, պէտք է մոռանաս քու ծնողքդ, ուրախացիր, ու զուարթ եղիր որ ինձ նման զօրաւոր և քաջ մարդու մը սէրն պիտի վայելես, մօտեցի՛ր ինձ, քու ամեն մի ժպիտդ ինձ յաւիտենական անմահութիւն պիտի բաշխէ։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Կ'ատեմ ես քու սէրդ, ինձ նման ողորմելի կոյսի մը ժպիտը. երբէք չը կրնար քեզ անմահութիւն տալ, այլ յաւիտենական անէծք մը որ պիտի հալածէ զքեզ մինչև կենացդ վերջին շունչը։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ինչ՞ որ ալ ըսես, անօգուտ է, ես բան մը չեմ զգար քու օդային խօսքերէդ սաչափ կրնամ ըսել որ ընդհակառակը զուարճութիւն

մի կը զգամ քու նախատալի բառերէդ որ կ'ուղղես ինձ. ինչու այդչափ սիրեցի զքեզ, հաւատա՛ որ ոչմի ծաղիկ իւր գեղեցկութեամբ իմ աչքերը չէ գրաւած երբ Կուլօի դէմքը չէ այն, և ո՛չ ալ մի երգասէր թռչուն իր երգերով ինձ չէ զմայլեցուցած երբ քու գողտրիկ ձայնը չէ այն։

ԿԻԼԻԻԶԱՐ.— Եթէ իմ գեղեցկութիւն այնչափ գրաւած է քու սիրտը, եթէ իմ ձայնը այնչափ խոր ազդած է քու սրտիդ, այն ատեն պէտք է որ լսես իմ աղերսի ձայնը ու ազատ թողուս զիս, դահիճ մը ամենուն նկատմամբ դահիճ է բայց երբ կարդը կուգայ իւր սիրելւոյն նրա կը խնայէ և կամ ինքը իւր դահճի պաշտօնը չի կատարեր, ուրեմն եթէ ինձ կը սիրէք, ինձ դահիճ չը պէտք է որ լինիք, հեռի կեցի՛ր այն դիտաւորութենէդ որ պախարակելի է, դարձեալ կ'ըսեմ, ազատ թող զիս. աշխարհի վրայ ամենէն աւելի անմեղ արարած մ'է որ կը պաղատի քեզ, ազատէ զիս, տա՛ր քու ձեռքովդ յանձնէ զիս իմ ողբացեալ ծնողացս որ անոնք ալ ինձ նման արեան արտասուայ մէջ կը լողան, կատարէ՛ իմ խնդիրքը ու այն ատեն ես քո ոտներուն մատաղ կը լինիմ։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Ա՜հ Կուլօ, քո այդ սխալի նման քաղցրիկ ձայնիկդ ինձ աւելի ևս կը մոգէ և սիրտս կը բորբոքէ, քու այդ նազելի և անուշ նայուածքդ ինձ աւելի կը հրապուրեն որ զքեզ սի-

րեմ և միշտ սիրեմ, գողտրիկ արարած, չքնաղ էակ։

ԿԻԼԻԻԶԱՐ.— Բայց Մուսա, ինչպէս ըսի նախապէս. քու սէրդ ինձ ատելի է իսկ մարդասիրութիւնդ սիրելի. վայրկենական զուարճութեան մը համար չարժէր որ մարդս ոճրագործի վատանունը ժառանգէ։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Թո՛ղ վկայ լինին երկնքի հրեշտակները, որ զքեզ երջանիկ պիտի ընեմ, գիտցիր որ իմ հարէմխանայի մէջ դու ամենէն բարձր տեղը պիտի բռնես, մեռաքսեայ հանդերձեղեններով պիտի զարդարեմ քու ամբողջ մարմինդ։ Ա՜յո՛, սիրելի Կուլօ, դու պիտի լինիս աւելի գեղեցիկ, քու աչքերդ պիտի սեւացնեն սուրմայով և այդ քնքուշ մատներդ պիտի ներկեն հինայով և այն ատեն դու վարդէն աւելի քաղցրաբոյր և գեղեցիկ պիտի լինիս։

ԿԻԼԻԻԶԱՐ.— Քեզ թող լինին այն մեռաքսեայ հանդերձեղենները, քեզ թող լինին այն բոլոր սիրուն առարկաները որ կը խօսատանաս ինձ, ես իմ ցնցոտիներս աւելի կը սիրեմ, ես իմ հայրենի կիսակործան տնակս կ'ուզեմ. ես Շիրազի վարդերէն աւելի կը սիրեմ իմ հայրենեացս փուշերը, այդ սընոտի խօսամունքներդ դու ուրիշի մը ըսէ՛, և գիտցէք որ ո՛և է ամբարշտութեան համար դուք պատսխանատու պիտի լինիք առաջի Աստուծոյ ահեղ դատաստանին։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Բայց եթէ դուք յօժար կամ՝օք

չէ՛ք ընդունիր իմ առաջարկները, հակառակ պա-
րագային պիտի ստիպես զիս որ բռնութեամբ կա-
տարեմ իմ փափաքները, մտաբերէ միանգամ որ
դու ալ ես իմ ստրուկս, իմ գերիս ես, եթէ ուզեմ
կ'սպաննեմ, եթէ ուզեմ կը սիրեմ այս բոլորը իմ
կամքէս կախում ունին, ստրուկ մը իր տիրոջ ներ-
կայութեան պէտք է ունենայ երկիւղ և պատ-
կառանք։

ԿԻԼԻԶԱՐ.— Քու անունդ, քու վայրենի կեր-
պարանքդ, ալ ասկից յետոյ իմ սրտիս վրայ և ո՛չ
մի երկիւղ կրնայ ազդել, երբ հայրենի անակս էի
այն ատեն միայն քու անունդ մեծ երկիւղ կը պատ-
ճառէր, ոչ միայն մեր ընտանեացմէջ, այլ ամբողջ
Մշոյ դաշտի բոլոր Հայ հպատակներուն վրայ, այն ա-
տեն էր միայն որ ձեր կենաց համար կ'աղաչէինք,
այն ատեն էր միայն որ կը յարգէինք զքեզ, կար-
ծելով թէ դուք էք մեր տերը և ձեզնով պիտի
վայելենք հանգստութիւն և երջանկութիւն, իսկ
այժմ տեսնելով որ դուք էք մեր սիրելի թշնա-
մին և ձեր նպատակն է բոլորովին ջնջել զմեզ և հիմ-
նայատակ կործանել մեր խրճիթները մեր տուրբ
աղօթատեղիները. և այժմ ալ կը յանդգնիք բա-
րոյապէս փճացնել ինձ. ի՞նչ մարդկութիւն, ի՞նչ
աչխարհ և ի՞նչ երկիւղ ու պատկառանք, վերջա-
պէս մեռուցէք զիս ալ. աւելի դոհ պիտի լինիմ։ զի
լաւ է գերեզման քան նախատինք, լաւ է կ'ըսեմ

զլուխ չունենալ քան անբարոյականութեան ազ-
տով ներկեալ ճակատ մը։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Հանդարտէ սիրելի Կուլօս. այժմ
Հայութիւն և նրա թշուառութիւնը ողբալու ժա-
մանակը չէ, կամայ ակամայ պիտի խոնարհիս իմ
առջև, չես լսեր որ զքեզ երջանկութիւն կը խօս-
տանամ, ականջ դիր իմ խօսքերուս, դու արժանի
ես մահմեդականի տէրը վայելելու, դո՛ւ արժանի
ես Մուհամմէտի դրախտը վայելելու. կ'աղաչեմ
մի՛ընդդիմանար ինձ։ (Մեկ-մէ) Կը վախնամ որ այս
աղջիկն ալ Մագթաղի նման իմ կատաղի բարկու-
թեանս զոհ պիտի լինի. կը սոսկամ և կը յիշեմ
այն անմեղ աղջկան անէծքը որ զիս կը հալածէ ա-
նողորմաբար։

ԿԻԼԻԶԱՐ.— (Մեկ-մէ) Կարծեմ ազատ պիտի
թողու զիս (Բ-ը՛ջ) ի՞նչ վճռեցիք, պիտի թողուք
զիս որ ազատ երթամ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ— Ա՜հ, չեմ կարող բաժնուիլ քե-
զանից, պէտք է որ դու իմս լինիս։

ԿԻԼԻԶԱՐ.— Բայց գիտցիր որ դուք խղճի և ազ-
նուութեան հակառակ կը գործէք. պախարակելի է
ձեր այդ ընթացքը, լաւ համոզուեցէք որ իմ մահ-
ուանս պատճառ պիտի լինիք, ինչո՞ւ կը ժդունի
սև ճակատդ, ինչո՞ւ լուութեան ներքև ծածկել
կ'ուզես ամօթդ ու ոճիրդ, մի՛զայրանար ինձ դէմ,
մտիկ ըրէ՛ խօսքերուս և ամօթալի ճակատդ խո-

նարհեցու՛ր մինչև որ խօսքս վերջացնեմ, և այն ատեն իմ վրէժխնդիր և արդար բողոքի ձայնս կլսուելու համար կարող ես միայն դահճին յանձնել զիս, բայց ո՛չ... չպիտի յանդգնիս այդ անարդար վճիռը արձակելու, վախնալով որ երկրորդ օրը իմ վրէժխնդիր ուրուականս դէմերնիդ կ'ելլէ և միևնոյն խօսքերը կը կրկնէ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ալ բաւական է, այդ ասպիճան յանդգնութիւն այդչափ նախատինք ինձի դէմ, օ՞ն մարը այդ դռնէն (Ալ կողմ դառնալ ցոյց տալով) պէտք է որ իմս լինիս...։

ԿԻՒԼԻԻԶԱՐ.— Ուրեմն, կ'ուզե՞ս բռնութեամբ գործադրել քու վատ դիտաւորութիւնդ, բայց գիտցիր որ ես պիտի մաքառիմ քեզի դէմ այս գիշեր. մինչև որ շնչասպառ տարածուիմ գետնի վրայ և այն ատեն իմ ցուրտ դիակս առ քու պիղծ գրկացդ մէջ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ինչ՞ որ ալ ընես անկարելի է ձեռքէս ազատիլ. դեռ չես զգար որ զօրաւոր Մուսայի մը երկաթէ ձեռքերուն ներքև կաշկանդուած ու ճնշուած ես։

ԿԻՒԼԻԻԶԱՐ—. Ո՞վ Աստուած, ո՞վ պիտի ազատէ զիս այս դժոխքէն, ո՞վ պիտի գթայ անոք և անվնասիթար աղջկան մը վրայ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ես պիտի գթամ քու վրայ, մի՛կարծեր թէ անպաշտպան ես։

ԿԻՒԼԻԻԶԱՐ.— Միթէ գայլը ոչխարին վրայ կը գթայ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (Բարկութեամբ) Ալ չեմ կրնար անհաւատ էակի մը նախատանքն հանդուրժել (Դուռնը ծերկոցնելով) օ՞ն մարի՛ր այդ դռնէն ապա թէ ոչ կորսուած ես։ (Բռնելով ոչխարն քաշելու ոչ կողմ քարշելն նէրս կը հանէն։)

ԿԻՒԼԻԻԶԱՐ.— (Նեղութեան) Օգնութիւն... օգնութիւն... (Կը լսուի ոչխարի հառաչանքը։)

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՄԻՐԶՕ (Զուխ կողմ դառնալ երևելով)

ՄԻՐԶՕ.— Վերջապէս յաջողեցաւ առիւծը իր մագիներուն մէջ առնել գառնուկը և մանել իր քարանձաւը...։

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ ԵՒ ՊԱՏԿԵՐԸ ԿԸ ՓՈԽՈՒԻ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐՐՈՐԴ ՊԱՏԿԵՐ ԱՌԱՋԻՆ
(ԳՈՒՐԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ)

Տեսարանն է Մուսայի տանը կից ախոռատան սենեակը, գիշեր է, սենեկի անկիւնը մի կրակարան։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՀԱՄՆՕ, ՄԻՐՋՕ, ԵՒ ԷՐԷԼ ԲՐԳԷԷ (Կրակի մօտ նստած կը մնան կրնած գործոց են)

ՀԱՄՆՕ.— Կարծեմ վերջապէս Մուսա պէյ յաջողեցաւ այս գիշեր գեղեցիկ Կուլոն իր գրկացը մէջ սեղմել և նրա կուսութեան առաջին վարդը քաղել համբուրելով անհաւատի աղջկան քաղցրիկ շրթունքներէն. խեղճը չա՞տ դիմադրեց, չա՞տ ըսպառնացաւ մեր տիրոջ և վերջապէս ուժասպառ ինկաւ մեր սիրելի տիրոջ գրկաց մէջ. ուսկից ազատիլը ալ ևս անհնարին է։

ՄԻՐՋՕ.— Ճշմարիտը խօսելով Խարց գիւղացի Կուլօի նման գեղեցիկ աղջիկ մը մեր տիրոջ նման բարձր անձնաւորութեան արժանի էր, քաջիրի աղջիկը միշտ կը մերժեր նրա սէրը և կը յանդգնէր դիմադրել իր բոլոր զօրութեամբ։

ՀԱՄՆՕ.— Եւ գիտէ՞ք ինչ պիտի լինէր Կուլօի վիճակը, եթէ այս գիշեր անձնատուր չը լինէր, առաւօտուն պէյի մօտ էի երբ Կուլօն իր դէմը առած կը համոզէր, իսկ նա միշտ կ'ընդդիմախօսէր

և կծու կծու պատասխաններ կուտար. պէյը բարկանալով ըսաւ աղջկան թէ եթէ դեռ ևս դիմադրէ Արդավանք գիւղի Օհանի նման պիտի այրէ կը-բակի մէջ նետելով զինքը և Մուսա պէյի ճիշտ դիտաւորութիւնն էր այրել զԿուլօ եթէ հակառակեր։

ՄԻՐՋՕ.— Եւ այդ լսելէ յետոյ դարձեալ անձնատուր չ'եղա՞ւ։

ՀԱՄՆՕ.— Ո՛չ, անհաւատը ինչ՞ պատասխանէ լաւ է. — «Այրէ զիս, ես իմ ձեռօք կը հաւաքեմ փայտը և կը պատրաստեմ մի ահագին խարոյկ և ամենայն յօժարութեամբ կը նետուիմ բոցերի մէջ. աւելի լաւ է Քրիստոսի սիրոյն համար ողջակէզ լինիլ քան թէ Մահմետականի մը պիղծ գըրկացը մէջ լինիմ» կ'ըսէր։

ՄԻՐՋՕ.— Որչա՞փ յանդգնութիւն. . . Հանօ՛, եթէ վաղ առաւօտ Մուսա պէյ առաջարկէ քեզ Կուլօն կնութեան տալու ինչ՞ կ'անես։

Հանօ.— Կեանքս կուտամ տիրոջս համար. և կ'ուխտեմ այս վայրկեանէս երկուքին ալ ստրուկը լինիլ. Աստուծոյ դրախտի մէջ հո՞ւրէ վայելելու չափ ազդեցութիւն ունի Կուլօի նման կին մը ունենալը. ինչ՞ մեծ երանութիւն է այն գիտե՞ս։

ՄԻՐՋՕ.— Եթէ ես Կուլօի տեղ լինիմ չեմ դարձրու մօտ։

ՀԱՄՆՕ.— Ինչո՞ւ. . .

ՄԻՐԶՕ.— Վանդի սոսկալի մարդ մ'ես դու. դէմքդ ահռելի է և կերպարանքդ սոսկալի, դու դժոխքի նման մարդ մ'ես. երբ օր մը բարկանաս հաւի նման նրա ալ գլուխը կը կարես և երբէք չես խնայէր այդպիսի սիրուն արարածներին։

ՀԱՄՆՕ.— Ամի շատ ճշմարիտ է. և ահա իմ կրակոտ բնաւորութեանս համար է որ մեր աշխարհի մէջ չեմ կարող մի օրիորդ գտնել ամուսնանալու, յիշաւ ես շատ անգութ եմ, երբ բարկութիւնս մէկը գրգռէ, չեմ կարող հանդուրժել. ո՛չ կնոջ մը պաղատանքը և ոչ ալ երեխայի ժպիտը կարող է իմ կրակոտ բարկութիւնը մեղմացնել. իմ վճիռս անդառնալի է, ինչ որ ալ որոշեմ պէտք է որ գործնականապէս կատարուի, այն ալ իմ ձեռքերով առանց ուրիշի օգնութեան։

ՄԻՐԶՕ.— Կեցցե՞ս քաջդ Հասնօ, Մշոյ դաշտի մէջ ամբողջ Քուրդ աշիրաթները իրաւունք ունին պարծենալու քեզմով. բոլոր աշխարհի առջև, դու որ մեր ցեղի անունը կը փառաւորես, դու որ քու հիանալի քաջագործութիւններովդ ծանօթ ես մեր ցեղի անշուշտ մի օր պիտի վայելես Մուհամմէտի արքայութեան մէջ ամենափառաւոր տեղը. իմ հաւատքս և կարծիքս այս է։

ՀԱՄՆՕ.— Ես մեր ամենասուրբ Գուրանի պատուէրները միշտ կը կատարեմ, և «Քէլիմէի Շահատէթ» այն Աստուածային և անսխալ գրքի պատուիրանաց կը հետևիմ, գիտէ՞ք Մահմետականաց այս երկու վեհ գրքերը ինչ՞ կը պատուիրէ անհաւատ կեավուրների մասին։

ՄԻՐԶՕ.— Մեր մէջ չես կարող գտնել մէկը որ իւր մանկութեան ժամանակ մեր սրբազան Շէյխի աշակերտած լինի իբրև Սօֆթա, դու շատ տարիներ Շէյխ Ջալալատինի դասերը լսած մէկն ես. որով Մահմետականութիւնը կատարելապէս ուսումնասիրած ես. մենք 'ի վաղուց կը փափաքէինք առիթ ունենալ երեկոյ մը լսել ձեր գիտցածները, եթէ այս գիշեր մեզ պատմես Գուրանի և Քէլիմէի Շահատէթի վարդապետութեան պիտանի կտորներէն շատ շնորհակալ պիտի լինիմք և մեք ալ աւելի որոշ գաղաբար պիտի ունենամք մեր սուրբ Մարգարէի պատուիրանաց վրայ որ լսած է կեավուրների մասին։

ՀԱՄՆՕ.— (Հասնօ և դուս Քրդեր ձնկան վրայ կոտկան) Մտիկ ըրէ՛ք ուրեմն, երբ մեկը յանդգնի Աստուծոյ ամենասիրելի ծառաների, Մուսուլմանների արիւնը թափել և մեր սուրբ Մարգարէի մեղ ցոյց տուած հաւատոյ և կրօնի դէմ անպատշաճ և թշնամանօք խօսիլ այն ատեն կը պատուիրէ զմեզ նրանց կոտորել և ոչնչացնել հաղրաթը Մուհամմէտ իր Գուրանով կը հրամայէ նաև սուրբ կրօնի դէմ թշնամիների արեան հոսումը հաճելի է մեր Աստուծոյ առջև, և երբէք չի արգիլեր զմեզ կո-

տորել նրանց նորածին մանուկներէն սկսեալ մինչև դողդոջուն ծերունին։

ՄԻՐԶՈ.— Իսկ եթէ լինին այնպիսիներ որք ընդունին Մահմետականութիւնը դարձեալ ելէ՞տ է կոտորել նրանց։

ՀԱՄՆՕ.— Ո՛չ, երբ այնպիսիք յօժարութեամբ և անկեղծօրէն կ'ընդունին Իսլամութիւնը, պէտք է ազատ թողուլ նրանց և չի սպանելի. և միևնոյն ժամանակ վարժեցնել Քրիստոնեական սովորութիւններին. գեղեցիկ աղջիկները անմիջապէս ամուսնացնել Մահմետական ցեղի պատկանող երիտասարդաց հետ։

ՄԻՐԶՈ.— Ըստ Գուրանի վարդապետութեան մեղ ներելի՞ է Քրիստոնէից հետ միասին բնակիլ և մեր տուների մէջ ընդունիլ զանոնք։

ՀԱՄՆՕ.— Պէտք է գիտնաք և լաւ համոզուիք որ մեզանից շատերը յանցաւոր են և դատաստանի օրը բոլորը սև երեսներով պիտի յայտնուին Մէհմէտի առաջը. եթէ թոյլ տան կեավուրների ոտք կոխել այն հողի վրայ որ կը պատկանի Իսլամ հաւատացեալների իսկ անոնք որ կը կռուին և արիւն կը թափեն մեր օրինաց դէմ մեղանչողների հետ նոքա դատաստանի օրը կը ներկայանան Մուհամմէտի առաջը պարզ և պայծառ երեսով. նրանց ճակատներուն վրայ պիտի փայլի իրենց քաջութեան աստղերը և մեր Մարգարէների մեծը

ահա այդ նշանով պիտի ճանաչէ իր քաջերին և պիտի վարձատրէ Աստուծոյ դրախտի ամենագեղեցիկ փառքերով, ահա՛, ասոնք են մեր Աստուածային գրքի բովանդակութիւնը անհաւատների մասին. այս երեկոյ համառօտապէս նկարագրեցի ձեզ. վերջացնելով Գուրանի վարդապետութեան բովանդակութիւնը, ձեզ սա ևս ասեմ թէ հարկ է գիտենալ թէ մեր սուրբ կրօնի հանգանակը Մահմետական տարրին երբէք թոյլ չի տար խոնարհիլ այլադաւանի ոտի տակ. Մահմետականը կամ պէտք է տիրէ և կամ պէտք է ոչնչանայ։

ՄԻՐԶՈ.— Կեցցե՞ս, սիրելի Հասնօ, ճիշտ ըսածիդ պէս է, ես ալ միշտ այդպէս ըսած եմ, ասկից յետոյ քեզ հոգւով և սրտով պաշտողներէ մին ալ ես պիտի լինիմ որ այդ բաները լաւ գիտես, գիտցի՛ր որ Միրզան այս վայրկեանէս սկսեալ ձեր ամենախոնարհ ծառան է և կապուած է քու աղնիւ հոգւոյդ հետ։

ՔՈՒՐԴԵՐԸ.— (Ա.ԴՆ+Ը Դ--Ն) Մենք ևս այս վայրկեանիս կ'ուխտեմք հաւատարիմ մնալ մեր սիրելի Հասնօի և յարգել միշտ նրա անձնաւորութիւնը։

ՄԻՐԶՈ.— Իմ խորին շնորհակալութիւնս կը յայտնեմ, որ իմ առաջարկը ընդունելով այս երեկոյ լուսաբանեցիք զմեզ։

ՀԱՄՆՕ.— Օրհնեալ լինիք ամենքնիդ ալ և ձեր իւրաքանչիւրի սրտի փափաքը կատարէ մեր սուրբ Մար-

գարէն. (ԱԴԴ+Ը ԿԱ+Է ԷԼԷՐՎ) օ՞ն, ուրեմն, երթանք հանգստանալու, վաղ առաւօտ դարձեալ կը հաւաքուիմք մեր սիրոյ Մուսա պէյի շուրջը և կը շնորհաւորեմք այս երջանիկ դիշերը որ նա յաջողեցաւ վայելելը։

ՁԳԻ ՎԱՐԱԳՈՅՐՆ

ԱՐԱՐՈՒԱԾ ՁՈՐՐՈՐԴ

(ԱՆՄԵԼԻՆ ՊԱՇՏՊԱՆԸ ԱՍՏՈՒԱԾ Է)

Տեսարանն է Շէյխ Մէհմէտի տունը 'ի Փարսանք գիւղ. բաւական կոկիկ սենեակ մը արեւելեան ճաշակով մէջտեղը դուռ։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ՄՈՒՍԱ պէյ, ՃԷԶԱՅԻՐ պէյ և ԿԻՒԼԻՒԶԱՐ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (ԿԷ-ԼԷ-ՂԷՐԷ ՅԷ+ԷՆ ԲՈՆԾ) Ահաւասիկ սիրելի Կուլօ, քեզ կը յանձնեմ իմ հարազատ եղբօր Ճէզայիր պէյի, ալ ասկից յետոյ Նրա կինը պիտի համարուիս. այժմ մեր յարգելի Շէյխ Մէհմէտի ձեռքով պիտի կատարուի ձեր երկուքի Ն+Է+Հի արարողութիւնը այս տեղ. ահա ադոր համար է որ հոս բերինք քեզ. և հիւրընկալուեցանք մեր սիրելի Շէյխի կողմանէ (Մ+Ա+Ա ԿԷՅԱՆՅՆԷ ՃԷԶԱՅԻՐ ՊԷՅԻ։)

ՃԷԶԱՅԻՐ ՊԷՅ.— Ուրախացի՛ր սիրեցեալդ իմ Կուլօ. դու որ ասկից առաջ ստրուկ մ'էիր այժմ և իշխող մը պիտի լինիս։

ԿԻՒԼԻՒԶԱՐ։— (ՁԷ+ԷՐՈՎ ԵՐԷՍԸ ԾԱԾԿԱԾ ԵՒ ՀԷՃԿՐՏԱԼՈՎ Դ ԿՈՂ ԿԸ +ԱՐԻ) Բայց ես չեմ կարող հասկնալ թէ դուք ինչ խաղեր կը խաղաք իմ գլխին, նախապէս Մուսա պէյ զիս կնութեան համար առաւ, իսկ այժմ ուրիշի մը կը յանձնէ, նման այն անօ-

թի որ մարդ ժամանակ մը գործածելէ յեսոյ ուրիշե մը կը նուիրէ։

ՃԷՋԱՑԻՐ ՊԷՑ.— Բայց ասոր մի՛ զարմանար, պէտք է գիտնաս որ մեր կրօնքը թոյլատրութիւն կուտայ երկու եղբարց համար իրարու կին առնուլ՝ երբ երկոցունց հաւանութեամբ կը կատարուի ամեն ինչ. այժմ Մուսա պէյ ի՞նչ որ ալ հրամայէ մենք պատրաստ եմք հնազանդելու և արդէն եղբայրս ձեզի հետ օրինաւոր կերպիւ չէ ամուսնացած և դուք ալ իրաւունք չունիք երբէք զինքը ամուսին կոչելու, այնպէս չէ՞ սիրելիս։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ես չեմ կարող հասկնալ ոչ ձեր օրէնքը և ոչ ալ կրօնքը, եթէ Քրիստոսի լինէի այն ատեն ծանօթ պիտի լինէր ինձ Մահմետական կրօնը։

ՄՈՒՍԱ ՊԷՑ.— Սիրելի եղբայր իմ, ես այժմ կ'երթամ Շէյխ Մէհմէտի մօտ զինքը հրաւիրելու որ կատարէ ձեր նիքեահը. մի քանի վայրկեանէն դարձեալ կուգանք Շէյխի հետ միասին ձեր մօտ։ (ԿԸ ԴԷՆԷ։)

ՃԷՋԱՑԻՐ.— Ինչ՞ երջանկութիւն է մարդուս համար երբ զօրաւոր է և իշխող ու իր առջև ամեն բան կը խոնարհի, այո՛, զօրաւորի ձեռքը կարող է աշխարհիս դրախտանման և ամենագեղեցիկ պարտեզներէն իսկ քաղել ամենարնտիր ծաղիկները, որ ո՛չ ոք կարող է արգիլել խօսք՝ ուրեմն սիրելի Կուլօ, (Մօտենալով) ինչո՞ւ այդպէս լուռ

և տխուր ես, ալ ասկից յետոյ իմս պիտի լինիս, ճաշի հոգին ու մարմինը դերի պիտի լինի քու գեղեցկութեանդ, (ԶԷՐԷՆ ԿԸ ԲԱՆԷ։) դու փոխարէն ուրախ զուարթ իմ գրկացս մէջ հանգչելու այս առաւօտ սովորականէն աւելի տխուր կը տեսնեմ զքեզ, միթէ՞ չի լսեցիր եղբօրս վերջին խօսքերը թէ ասկից յետոյ իմ կինս պիտի լինիս։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Այո՛, այժմ ալ բռնութեամբ քու կինդ պիտի լինիմ; վագրի բերնէն աղատուելով գայլի մագիլներուն մէջ պիտի ինկամ; ադոր համա՞ր է որ կ'ուզես ուրախ և երջանիկ լինիմ; այնպէ՞ս չէ։

ՃԷՋԱՑԻՐ ՊԷՑ.— Միթէ դու չես գիտեր որ մանկութենէ 'ի վեր կը սիրեմ զքեզ, երբ դու մի փոքրիկ օրիորդ էիր դեռ, յաճախակի կ'այցելէի ձեր տունը զքեզ տեսնելու համար, և ամեն անգամ կ'ըսէի որ գեղեցիկ Կուլօն պիտի առևանգեմ, և ամբողջ Խարց գիւղացիք գիտէին այս գործը։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ինչ՞որ ալ եղած է, ձեր այդ ըսածները ոչ փաստ կրնան համարուիլ և ոչ ալ իրաւունք կ'ունենաք դուք ինձ նման ողորմելի Հայուհի մը առևանգելով բռնի Մահմետականացնել և յետոյ պսակէք այսինչ կամ այնինչ անձի վրայ որ կոչմ որ դառնաք դուք ամենքնիդ ալ մեզապարտ էք Աստուծոյ և ձեր Մարգարէի առջև, մեղապարտ էք նաև աշխարհի ամեն օրինաց առջև,

դի դուք խղճի և աղնուութեան հակառակ գործեցիք, մտածէ՛ ճաղօ, եթէ ձեր գործած բարբարոսութիւնները Հայերը 'ի գործ դնէին ձեր վրայ, դուք ինչ՞ պիտի ասէիք նրանց։

ՃԷՉԱՃԻՐ ՊԷՃ.— Մենք ևս պիտի պարտաւորէինք փոխադարձաբար ջարդել բոլորին և մեր վրէժը առնուլ։

ԿԻԼԻԻՉԱՐ.— Եւ կարծեմ այդպէս կը պահանջէ արդարութիւնը այնպէս չէ՞։

ՃԷՉԱՃԻՐ ՊԷՃ.— Ա՛յո՛, երբ Հայը յանդգնի Քուրդի դէմ ղէնք վեր առնել, նա և նրա ամբողջ սերունդը արժանի է մահուան։

ԿԼԻԼԻՉԱՐ.— Իսկ երբ այն Հայը որ իր կեանքի մէջ երբէք Քուրդի մը դէմ ղէնք վեր չէ առած, նա միշտ մարդասիրութեամբ և հիւրասիրութեամբ է վարուած Քուրդի դէմ։ ուրեմն դուք իրաւունք ունի՞ք զանոնք հարատահարելու և ըսպաննելու, պատասխանէ՛ ճաղօ, յանուն Աստուծոյ և յանուն Մուհամմէտիդ. մի քանի վայրկեանի համար դու Հայ, իսկ ես Քրդուհի լինիմ, և այդ բոլոր բարբարոսութիւնները գործադրեմ ձեր վրայ, այսինքն ինչոր ունիք առնում ձեր ձեռքէն բռնութեամբ, առևանգեմ ձեր կիները և աղջիկները և բռնի Քրիստոնեայ ընեմ, և դուք ինչ՞ պէտք է անէիք ինձ այն ժամանակ, կը խնդրեմ, դատաւոր եղիր վայրկեան մը և ձեռքդ խղճիդ

վրայ դնելով վճիռ տուր, ուրեմն արդարացի՞ է ձեր ըրածը մեզի դէմ, արդարացի՞ է որ իմ ծերունի պապս սպաննեցիք, արդարացի՞ է որ Ռէս Միրօի նահապետական ընտանիքը թշուառացուցիք, արդարութի՞ւն է որ դիս իմ հայրենի բնակարանէս առևանգեցիք և վերջապէս կը հարցնեմ քեզ թէ արդարա՞ցի է որ դիս կ'ուզէք Մահմետականացնել բռնի կերպով և կնութեան առնուլ. . . (ճաղ երկար կը մտածէ։) խօսէ՛. վճիռ տու՛ր. . . ինչո՞ւ չես պատասխաներ։

ՃԷՉԱՃԻՐ.— Ինչ՞ խօսիմ և ինչ՞ պատասխանեմ, ձեր խօսքերը ամբողջութեամբ ամենաստոյգ և ամենաճշմարիտ են, ահա կը խոստովանիմ թէ մենք աշխարհիս ամենավատ արարածներն ենք, արդէն ծանօթ է քեզ Քրդի կեանքի պատմութիւնը, նա մի լեռնական վայրենի ազգ է, մեր վրայէն այնչափ դարեր սահած են և դարձեալ չեն կրցած բարեփոխել մեր արդի վայրենութիւնը, անհրաժեշտ պէտք է որ մեր վրայ իշխէ ամենազօրաւոր ձեռք մը. որպէսզի կարենայ այս անիծեալ ազգի վայրենական բնաւորութիւնքը բարեփոխէ, ահա՛ ասէ իմ այս խոստովանութիւնս և 'արդար վճիռս. որ զքեզ 'ի սրտէ սիրած ըլլալուս համար է որ կը խոստովանիմ, և այս խոստովանութիւնս պէտք է դաղտնի մնայ ձեր փափուկ և հրեշտակային սրտի խորը, իմ փափաքս է մինչև կենացս վերջը քեզ

հետ ապրիլ, սիրել ու սիրուիլ. կը պաղատիմ քեզ. մի՛ընդդիմանար իմ առաջարկիս. այժմ պիտի դայ մեր շէյխը, դու բաւական է որ խօստովանիս նրա թէ սիրով կ'ընդունիմ Մահմեդականութիւնը և կը փափաքիմ ձէզայիր պէյի հետ ամուսնանալ. այս երկու խօսքը բաւական է. պիտի ընդունիս այնպէս չէ՞։

ԿԻԼԻԶԱՐ.— (Մէկ-մէկ) Պէտք է ընդունիլ առ-ժամանակեայ կերպիւ և երբ առիթը դայ այն ատեն իմ վրէժս կ'առնում այս վատերէ (Բ-ԷՅԷ) այո՛, պիտի ընդունիմ ձեր առաջարկները, պայմանաւ միայն որ քու կենդ լինիմ մինչև վերջը։

ՁԷԶԱՅԻՐ ՊԷՅ.— Եւ արդէն իմ փափաքս ալ այդ է. ո՜հ, որչափ երջանիկ ըլլիր դիս ձեր այդ արտասանած երկու քաղցրիկ բառով. գիտցիր որ քու վիճակդ իմ վիճակիս հետ կապուած է. մեր երկուքին սատղը միևնոյն հորիզոնի վրայ կը փայլին քու անարատ սիրադ արթնցնելու և սեւորակ աչերդ 'ի լոյս բանալու Աստուած դիս է ընտրեր աշխարհիս վրայ ամեն բան եռեւէ եռեւ կ'անցնի և կ'անհետանայ, առանց շաւիղ մը, առանց հետք մը թողնելու, միայն մի բան կայ որ երկնային է և աւեւական դա սէրն է միայն. սիրելը և սիրուիլն է, կեանքը ծաղիկ մ'է և սէրը անոր քաղցրիկ հիւթը. սէրը կ'ըսեմ այն երկչոտ շնորհքն է որ զօրութեան վրայ կը կոթնի. սիրենք ուրեմն

զիրար և միատեղ ապրինք, ահա, այդ է մարդուս երջանկութիւնը և ուրախութիւնը։

ԿԻԼԻԶԱՐ.— Ահա, կը կրկնեմ իմ խօստումս, ակնոց յետոյ քուկդ պիտի լինիմ։

ՁԷԶԱՅԻՐ ՊԷՅ.— Ո՜հ, մեր հզօր Մարգարէի օրհնութիւնը քու վրայ լինի. ուրախ եմ որ գեղեցկութեանդ յարգը ճանաչեցիր. տե՛ս, ինչպէս վրադ կը դուրդուրամ, կը հալիմ ու կը մաշիմ քեզ համար. դու չե՞ս գիտեր որ սէրը ինչ՞ աստիճան մարդս դերի կ'ընէ (Դրուն ոտէ յոյները) ահա՛, կուգան. դու ինքզինքդ միշտ ուրախ և զուարթ ցոյց տուր, և երբ Շէյխը հարցնէ քեզ թէ՝ կ'ընդունի՞ս Մահմեդականութիւնը, համարձակօրէն պատասխանէ թէ՝ այո՛, կ'ընդունիմ և ձէզայիր պէյի կինը պիտի լինիմ։

ԿԻԼԻԶԱՐ.— Լաւ՛, այդպէս կը պատասխանեմ։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն, ՄՈՒՍԱ պէյ, ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (Շէյխէ ուղղուելով Խօսքը) Ահաւասիկ, Տէր իմ այն Հայուհին որոյ մասին քիչ մ'առաջ խօսեցայ ձեզ, կարող էք հարցնել նրա թէ՝ ինչ՞ է իր փափաքը։ (Շէյխ Մէհմէտ, Մուսա և ձէզայիր կը նստին գրեթէ մը վրայ)։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Մօտեցիր աղջիկս. (Կէ-լէ-ղր կը կոնդնի Շէյխէ դէմը) ինչ՞ է քու անունդ։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Կիւլիւզար։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Ո՞ր տեղացի ես դու։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Մշոյ Խարց գիւղացի եմ։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Ինչ՞ բանի համար եկած ես։

ԿԻՎԼԻԶԱՐ.— (Մոտենալով) Մուսա պէյի եղբօր ճէզայիր պէյի կին լինելու համար։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Այդ չէ կարելի. որովհետև ճէզայիր պէյ Մահմետական է, իսկ դու Քրիստոնեայ։

ԿԻՎԼԻԶԱՐ.— (Մոտենալով) . . . Այո՛ ես Քրիստոնեայ էի բայց այժմ։ . . .

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ասա՛. աղջիկս, մի վախնար, այժմ Մահմետական ես այնպէ՞ս չէ։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Այո, այժմ Մահմետական եմ, և ճէզայիր պէյի. . . .

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Մահմետական ես և ճէզայիր պէյի կինը. այնպէ՞ս ասել կ'ուզես։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Այո՛. կը խոստովանիմ ձեր ներկայութեան թէ Մահմետականութիւնը ընդունած եմ ճէզայիր պէյի կինը լինելու համար։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Լաւ. Աստուած օրհնէ քեզ բայց մի քանի հարցումներ պիտի ընեմ քեզ և դու ալ պարտական ես առանց ստելու անվեհեր կերպիւ ճշմարտութիւնը խոստովանիս ինձ։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Պատրաստ եմ ձեր բոլոր հարցմանց պատասխանելու։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Այժմ ասա ինձ թէ Մահմետականութիւնը ընդունելու համար ձեր վրայ որ և է բռնութիւն բանեցուցա՞ծ են այս երկու անձինք և կամ ուրիշներ։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Ա՜հ. . . . ո՛չ երբէք, միայն թէ զիս գիշեր ատեն առևանգեցին իմ խրճիթէս և բերին հոս։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Այդ սովորական բան է, ամէն երկրի մէջ կը պատահի, աղջիկ առևանգելը ոճրագործութիւն մի չի համարուիր. և ո՛չ ալ օրինաց հակառակ է, Մուսա պէյ գլեղ առևանգած է որ իւր երիտասարդ եղբօր ճէզայիր պէյի կինը լինիս։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Այո՛, ատի ճշմարիտ է, և այս մասին Մուսա պէյ յանցաւոր չէ։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Եթէ ծնողքդ թոյլատուութիւն չընէ, և գլեղ պահանջէ Մուսա պէյէ կառավարութեան միջոցով ինչ՞ պիտի ընես այն ատեն։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Բոլորովին պիտի մերժեմ, և չը պիտի ճանաչեմ իմ ծնողքս։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Իսկ եթէ կառավարութիւնը բռնի յանձնէ գլեղ ծնողացդ։

ԿԻՎԼԻԶԱՐ.— Դարձեալ խոյս կուտամ նրանցից և կուգամ ճէզայիր պէյի մօտ։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

(Նոյն+ Լ ՄԻՐԶՈ։)

ՄԻՐԶՈ.— (Ա՜ Մ՜՜՜) Տէր իմ, մի կառավարութեան պաշտօնեայ երկու ոստիկանօք եկան և կ'ուզեն ձեզ ներկայանալ. ինչ՞ հրաման կուտաք։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (Ոտէ ելլելով) Ո՞վ են արդեօք այդ ոստիկանները և պաշտօնեայն։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Կարծեմ այս տարուան զինուորական տուրքերը հաւաքելու եկած են։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ինչ՞ կը հրամայէք, ընդունի՞նք թէ ո՞չ։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Այն որ Մշոյ փաշայի կողմից են գալիս. պէտք է ընդունիք։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Միրզո, գնա շուտով առաջնորդէ հիւրերը այս տեղ։

ՄԻՐԶՈ.— Պատրաստ եմ ձեր հրամանը կատարելու տէր։ (Կը դնէ)

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— Ձեզայիր պէյ, առ այդ աղջիկը և առանձնացէք միւս սենեակը. երբ պէտք լինի՝ դարձեալ կը կոչեմ զձեզ։ (Կը դնէ)

ՏԵՍԻԼ ՉՈՐՐՈՐԴ

ՇԷՅԽ ԷՄԻՆ, ՄՈՒՍԱ ՊԷՅ Լ ՀԱՃԻ ՏԱՅԻՊ։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— (Հրացանն 'է յոս՜) Սէլամին ալէյքում։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ալէյքում սէլամ։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— (Շարժելով իր նոպաճ պեղէն) Ալէյքում սէլամ. բարի եկաք։ Հրամայեցէք։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— (Կը նստի) Բաւական հոգնեցանք, երկու օր է որ ձիու վրայ գիւղէ գիւղ կը շրջագայինք առանց հանգիստ առնելու մի տեղ. . .

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Այժմ ուսկի՞ց կուգաք։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Մուշէն, մի պիղծ կեավուրի աղջկան համար. փաշան զմեզ ուղարկեց գործը քննելու, և տեղեկագիր մը պատրաստելով ներկայացնել։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Նորէն ինչ՞ պատահեցաւ, անհաւատները դարձեալ գլուխ են բարձրացուցեր. ինչ՞ կ'ուզեն կառավարութենէն։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Նրանց ինչ՞ ուզելը գիտեմ ես, բայց դեռ ժամանակը չէ։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Պատմէ տեսնենք. ինչ՞ է պատահած։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— (Երկար ծխափողը լեցնելով) Մի քանի օր առաջ Խարց գիւղացի մի քանի Հայեր եկան և փաշային ասացին թէ Մուսա պէյ 50-60 զինեալ Քուրդերի գլուխը անցած. գիշերը յարձակելով նրանց տունների վրայ, Ռէս Միրօի ծերունի հայրը սպաննելով, և իւրեանց ամբողջ հարստութիւնը առնելէ յետոյ Աղաճանի 15 ամեայ կիւլուզար աղջիկը առևանգած և փախած են. լաւ ե-

զաւ որ Մուսա պէյ ալ այս տեղ գտնուեցաւ, ուրեմն եթէ կարելի է պատմեցէք տոն եղելութիւնը որպէսզի տեղեկանամ գործին իրականութեանը։

ՇԷՅԽ ՄԻՀՄԻՏ.— Մուսա պէյ, պատմեցէք եղելութիւնը հաճի Տայիպ էֆէնտիի. զի այդ սուտ զրպարտութիւնները ձեզ կը վերաբերի։

(Մէջը սոսրշ կը բերէ, հաճի Տայիպ կ'ասէնոս. Մէջը կը սպասէ։)

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Գործին բուն ճշմարտութիւնը պատմեմ և լսեցէք. Աղաճանի աղջիկը սիրահարելով իմ եղբօր ձեզայիր պէյի, մի Խարց գիւղացի Հայ կնոջ հետ լուր խրկած էր թէ, երթամ զինքը առնում և բերեմ մեր գիւղը. ես ալ ըստ աղջկան փափաքանաց դացի գիշեր մը երկու հոգւով և աղջիկը բերի. բայց այդ ինչ սոսկալի զրպարտութիւն է որ ըրած են. թէ ես մարդ սպաննած, և նրանց ամբողջ հարստութիւնը բռնի առած եմ։ այսպիսի բան մը երբէք չէ պատահած. և իմ խօսքերս հաստատելու համար. այժմ թող գայ նոյն ինքն Կիւլիւզարը և ձեր ներկայութեան պատմէ բուն եղելութիւնը. աղջիկը այժմ այստեղ է եթէ կը փափաքիք բերենք հարցուցէք անձամբ նրա։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Բերէք տեսնեմ այդ աղջիկը։

ՇԷՅԽ ԼՄԻՆ.— Միրզա. ներսի սենեակը մի Հայ աղջիկ կայ շուտով բեր այստեղ։ (Մէջը կը դնէ։)

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ո՞վ Աստուած. այս ինչ՞ ամբաստանութիւն է որ իմ վրայ կ'ընեն։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Եթէ աղջիկը հաստատէ ձեր ըսածները. այն ատեն դուք իրաւունք կ'ունենաք պատիւ պահանջել այդ խաբերայ և անհաւատ մարդիկներէ. ատի անպատճառ պէտք է որ ընէք որպէսզի ուրիշ անգամ չի յանդգնին զրպարտել ուղղափառ մահմետականներին։

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ՆՈՅԵ ԿԻՒԼԻՒԶԱՐ ԵՒ ՄԻՐԶՈ

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ահա եկաւ։ (Մէջը կը դնէ։)

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Աղջիկս. դու Խարց գիւղացի Աղաճանի աղջի՞կն ես։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Այո՛։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Ինչո՞ւ այս տեղ բերին քեզ։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Ես իմ յօժար կամօքս եկայ. ձեզայիր պէյի կին լինելու համար։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Ուրեմն, դու կ'ընդունի՞ս Մահմետականութիւնը։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Այո՛, ես Մահմետական եմ եղած։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Եթէ ինձնէ զատ ուրիշ պաշտօնեայներ ալ հարցնեն քեզ, այսպէս համարձակօրէն նրանց ալ պիտի պատասխանես թէ ոչ։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Ո՛վ որ ալ լինի, ես պատրաստ եմ խօստովանելու։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Այն ատեն պէտք է որ զքեզ

մեր հակոզութեան տակ Մուշ տանենք. որպէսզի փաշայի ներկայութեան ալ այդպէս խօստովանիս, թէ կ'ընդունիս Մահմետականութիւնը։

ԿԻԼԻԶԱՐ.— Կ'աղաչեմ զիս հանգիստ թողուցէք. ես և ոչ մի տեղ չեմ կարող երթալ. եթէ կ'ուզէ փաշան թող դայ այստեղ. ես պատրաստ եմ խօստովանելու։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Բայց աղջիկս, առանց քու ծընողացդ հաւանութեան, դու չես կարող որ և է կրոնափոխութեան դիմել. օրէնքը այդպէս կը պահանջէ որ նրանց ներկայութեան ալ այդ խօսքերը արտասանես։

ԿԻԼԻԶԱՐ.— Ես ո՛չ ծնողքս կը ճանաչեմ, և ո՛չ ալ փաշան. ես յանձնուած եմ Մուսա պէյի. նա ինչ որ հրամայէ այնպէս պէտք է գործեմ։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Մտիկ ըրէ ինձ աղջիկս. եթէ կը սիրես դու ձեզայիր պէյը. պէտք է որ իմ խրատներս լսես, ու քու ամուսնացդ պատիւը պաշտպանելու համար, պարտիս ընդունիլ մեր առաջարկը. մեծ բաղդաւորութիւն ունեցած ես որ այնպիսի ազնուական և մեծատուն մարդոց պիտի արժանանաս. եթէ չես ընդունիր Մուշ երթալ, ուրեմն երթանք Բաղէշ. ծնողքդ այնտեղ չեն կարող դալ. մենք զքեզ ներկայացնելով Բաղէշի դատաւորայ և պաշտօնէից. նրանց ալ մի անգամ կը խօստովանիս Մահմետականութիւնը ընդունելդ, և այնտեղ

զքեզ կը յանձնենք քու ամուսնացդ, և միևնոյն ժամանակ օրինաւորապէս կ'ամուսնանաս ձեզայիր պէյի հետ։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷԴ.— Շատ լաւ վճռեցիք հաճի տայիպ էֆէնտի, և արդարութիւնն ալ այդպէս կը պահանջէ։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ես ևս համամիտ եմ ձեր այդ առաջարկութեան, և խորհուրդ կուտամ Կիւլիզարի որ իւր անձը ձեզ յանձնելով երթաք միասին Բաղէշ, և վերջնականապէս կարգադրեք այս գործը խղճի մտօք։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Մուսա պէյ, կարծեմ դու ևս համակիր ես մեր այս որոշման։

ՄՈՒՍԱ ՊԷՅ— Ա՛յո՛, ինչպէս չէ, ամենայն սիրով կ'ընդունիմ։ Ես ալ ձեզ նման արդարութիւնը կը սիրեմ, և կը փափաքիմ որ անիրաւութիւն երբէք չ'գործուի։

ԿԻԼԻԶԱՐ.— Կ'ընդունիմ ձեր բոլորի առաջարկը. ես կ'երթամ Բաղէշ. սա պայմանաւորդարձեալ զիս յանձնեն Մուսա պէյի. իսկ եթէ պիտի յանձնէք եմ ծնողացս, այն ատեն աւելի լաւ է որ զիս այստեղ սպաննէք։

ՇԷՅԽ ՄԷՀՄԷԴ.— Ձեր այդ ըսածը անկարելի է, մենք այժմէն զքեզ կը ճանաչեմք ուղղափառ Մահմետականուհի մը. ոչ ոք կարող չէ ձեր վրայ ելնել բայց ի Մուսա պէյէ. դու հանգիստ եղիր։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— Ուրեմն, վաղ առաւօտ, ամենքնիս միատեղ կը մեկնիմք ասկից 'ի Բաղէշ և երթալով փաշայի մօտ կը կարգադրենք մեր գործը։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Համաձա՞յն է՛ք ամենքնիդ ալ։

ԱՄԵՆՔԸ.— Ա՛յո՛, համաձայն ենք։

ՏԵՍԻԼ ՎԵՑՏԵՐՈՐԴ

ՆՈՅՆ + ԵՒ ՄԻՐԶՕ

ՄԻՐԶՕ.— Սեղանը պատրաստ է հրամայեցէք։ (Կը դնէ)

ՇԷՅԽ ՄԷՀՄԷՏ.— (Ոտէ ելնելով) Հրամայեցէք. երթանք ճաշելու, յետոյ դարձեալ կը խօսինք։

ՄՈՒՍԱ ՊԷՅ.— (Կէ-լէ-ղէ) Դու այստեղ կեցիր մինչև որ մենք վերադառնանք։ (Կը դնէին ոտնոտը կէ-լէ-ղէ կը ճայ դնակ։)

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Հեռացէք վատ արարածներ. արդէն ես ալ այդ առիթը կը փնտռէի որ դիս միանգամ Բաղէշի մէջ տեսնէի. իմ ուզածս ալ այդ է. այնտեղ կառավարութեան պաշտօնատան մէջ 'ի ներկայութեան Մահմետական և Քրիստոնեայ պաշտօնէից պիտի խայտառակեմ զձեզ փառաւորապէս, ահա այն ատեն արդարութիւնը ըսի նման դուրս պիտի գայ զոր դուք վատաբար կ'ուզէք ոտնակոխ ընել, ահա կռիւ մը որ տկարը զօրաւորին դէմ պիտի մաքառի. և վերջապէս յաղթող պիտի հանդիսանայ, մինչև վերջին շունչս ուխտած եմ պաշտպանել Հայի Լուսաւորչական սուրբ հաւատը հոգւոյս խորերուն մէջ։

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

(ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹՈՂ Է)

Տեսարանը կը ներկայացնէ Բաղէշի կառավարութեան պաշտօնատանը մէջ փաշայի սենեակը զարդարուած։

ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ, ՀԷՅԻ ԷՄԻՆ, ՀԱՃԻ ՏԱՅԻՊ։ (Չ պահապան ոստիկաններ հրացան 'ի յեր-ին որոնք դրան էրկու-կողմը կանգնած։)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— (Ադնոցաւոր գրասեղանի մը մօտ նըստած։) Հաճի Տայիպ էֆէնտի, պատմէ տեսնեմ Մուսա պէյի առևանգած Խարց գիւղացի աղջկան վրայ ձեր ըրած քննութեանց պատմութիւնը։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Փաշա էֆէնտի, ըստ հրամանի Մշոյ վալի Ահմէտ փաշայի, մի քանի ոստիկանօք գացի Խարց, Թիլ և Տափավանք գիւղերը. այն տեղ միշտ անհրաժեշտ տեղեկութիւններ տուին ինձ Քուրդ Մուսա պէյի վրայ, յետոյ խմանալով որ Մուսա պէյ աղջիկը տարած է 'ի Փարանք գիւղ վերջապէս գացի գտայ այնտեղ Շէյխ Մէհմէտի տունը Մուսա պէյի հետ. այնտեղ երբ գործի վրայօք տեղեկութիւն ուզեցի, բերին առևանգեալ աղջիկը որ նա խօսի ճշմարտութիւնը, նա իմ և ուրիշների ներկայութեամբ խօսեցաւ. տեսայ որ աղջիկը իր յօժարութեամբ ընդունած է Մահմետականութիւնը, նոյն ատեն ես ուխտեցի գինքը միատեղ

Մուշ սանիլ որպէսզի այնտեղ ալ խօստովանի իր բերնով. բայց նա մերժեց, առարկելով թէ իւր ծնողքը այնտեղ կը գտնուին և կը յաղողին զինքը առնուլ և սանիլ գիւղ, քանի քանի անգամներ ալ ազաչեց ինձ որ զինքը պահեն Մուսա պէյի եղբօր ձեղայիր պէյի հետ, վասնզի շատ կը սիրէ եղեր այդ երիտասարդը. և չէ կարող բաժնուիլ նրանից, յետոյ ստիպուեցայ աղջիկը բերել այստեղ որպէսզի ձեր ներկայութեան ալ խօստովանի. և-բեկոյին ուշ ատեն երբ հասանք Բաղէշ, աղջիկը յանձնեցի Շէյխ Էմինի, և այս եղելութիւնը անմիջապէս տեղեկագրեցի Մշոյ փաշային։ որպէսզի պէտք եղած պատասխանները տայ աղջկան ծնողաց։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչ զարմանալի բան, բայց այդ անհաւատ կեռվուրները կ'ասեն թէ Մուսա պէյ գիշերով բազմաթիւ զինեալ մարդիկներով յարձակած է, Խարց գիւղի Ռէս Միրօի վրայ, և այնտեղ ծերունի Յակոբ անուն մէկը սպանուած, բաւական գրամ առած և աղջիկը առևանգած է. մեծ աղմուկ է պատճառած այս եղելութիւնը Մշոյ մէջ և մինչև իսկ Կ.Պոլիս կեդրոնական վարչութեան հեռագրած են այս լուրը։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Վերջապէս մի օր այդ չները մեր գլխուն մի փորձանք պիտի բերեն. ասկից յետոյ մենք Հայերից պէտք է զգուշանանք, և այժմէն պարտին.ք լուրջ միջոցների դիմել, որպէսզի ուրիշ անգամ չի յանդգնին այսպէս անտեղի աղմուկներ յարուցանել և մեր հանգստութիւնը վրդովելու պատճառ լինին, և այդ լուրջ միջոցները մենք ձեզանից կ'սպասենք փաշա էֆէնտի, դուք ամեն կերպով կարող էք զսպել այդ անիրաւները և անխնայ ջախջախել գլուխները. որք կը յանդգնին բարձրացնել հաւատացեալների դէմ։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Այո՛, իրաւունք ունիք, և շատ արդարացի է ձեր այդ կարծիքը, մենք միշտ մարդասիրութեամբ վարուեցանք նրանց հետ, աղատութիւն և հաւասարութիւն տուինք նրանց. մեր բարեխնամ Սուլթանի կառավարութիւնն ալ մեզնից աւելի երես տալով մինչև իսկ սկսաւ Հայոցմէ ալ մեր ամեն ժողովրդների մէջ անգամներ և պաշտօնեայներ ընտրել. պէտք է գիտնալ որ այդ աղը դեռ արժանի չէ այդչափ ազատութեան, միթէ մեր ազգի մէջ չի՞գտնուիր Հայոցմէ աւելի տաղանդաւոր և գիտուն մարդիկ. միթէ կը կարծէք թէ նոքա յոգուտ Օսմանեան կառավարութեան կը գործեն, շատ կը սխալուիք եթէ մենք մեր մէջ այդ կարծիքը և դաղափարը ունենանք։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ես՝ի վաղուց գիտեմ թէ Հայոց ծրագիրը ինչ է, և ինչ կ'երազեն, բայց նոքա լաւ թող գիտնան որ իրենց այդ երազը՝ի բարին չպիտի կատարուի, օր ըստ օրէ աւելի պիտի թաղ-

ուառանան, և ոչնչանան. Ես այնչափ փորձառութեամբս քաջ ճանաչեցի այս ապերախտ ազգը. տեսնեն.ք այժմ ինչպէ՞ս պիտի կարողանան արդարանալ, այսօր անպատճառ պէտ.ք է հաւաքեմ ժողովոյ անդամները. Հայ և Թուրք, և այդ գիւղացն ազգիկը թող նրանց ներկայութեան խօստովանի իւր կամաւոր կրօնափոխութիւնը. և եթէ յաջողենք այս կերպով կարող ենք մի լաւ ապտակ զարնել Հայոց. որպէսզի ուրիշ անգամ չի յանդգնին զրպարտելու Մուսա պէյի, և այլոց և այդ կարգի արտառոց լուրեր չի տարածեն մեր երկրի մէջ։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Շատ լաւ միջոց խորհեցա.ք փաշա էֆէնտի. և եթէ կ'ընդունի.ք մի փոքրիկ առաջարկութիւն ալ ես ունիմ ընելու։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ազատ է.ք ձեր կարծի.քը յայտնելու։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Ձեր վսեմութեան այսօր կազմելի.ք խառն ժողովոյ մէջ անպատճառ ներկայ գըտնուի տեղւոյս Հայոց առաջնորդը, և նրա ներկայութեանը, հարցնել ազգկան. երբ Կիւլիւզար խօստովանի ժողովոյ առջև իր Մահմեդականութիւնը, այն ատեն առաջնորդը պարտաւոր է իր կողմանէ ճշմարտութիւնը խմացնել 'ի Կ.Պոլիս ներքին գործոց նախարարութեան թէ Մուսա պէյ անմեղ է, յետոյ կառավարութիւնը պարտի պատժել Խարց

գիւղացի անիրաւ բողոքողները, ըստ օրէնի յանցաւոր մը անպատիժ պէտ.ք չէ թողուլ։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ես այդ մասին մի ուրիշ բան կը խորհիմ, երբ այսօր գործը քննելէ և վերջացնելէ յետոյ կը տեսնեմ որ Մուսա պէյ անմեղ իսկ Խարց գիւղացի.ք յանցաւոր. ստիպել Մուսան որ կեդրոնական կառավարութենէն խնդրէ իր դատը Պոլսոյ մէջ տեսնուելու, այն ատեն ես լաւ գիտեմ որ Մուսա պէյ պիտի արդարանայ և Կ.Պոլսոյ Եւրոպական ներկայացուցիչներ ալ լսելով Մուսայի անմեղութիւնը իւրեանց տերութեանց պիտի տեղեկագրեն թէ Հայեր յանցաւոր են, ալ անկից յետոյ եթէ ամբողջ Տաճկաստանի Քրիստոնեայները հարստահարուի և մինչև իսկ կոտորեն.ք զանոն.ք, Եւրոպական տերութիւն.ք երբէ.ք կարևորութիւն չեն տար, նրանց բողոքներին։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Եթէ յաջողի.ք, և Մուսա պէյ Պոլիս երթայ դատուելու համար. քաջ գիտեմ որ Օգոստափառ և արդարասէր Սուլթանը ամեն կերպիւ պիտի օգնէ նրա և չ'պիտի թողուն երբէ.ք ոտից կոխան լինել անհաւատներին. և անաչառ կերպիւ պիտի դատէ զանոն.ք։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Այժմ ո՞ր տեղ կը գտնուի Մուսա պէյ։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Մուսա պէյ մեզ հետ միատեղ այս տեղ պիտի գար ձեզ ներկայանալու, բայց ե-

բեկ առաւօտ Մուշի փաշայի կողմանէ մի սատիկան դալով, երկուքը միասին մեկնեցան Մուշ, չեմ գիտեր ինչ՞ բանի համար Ահմէտ փաշան կոչեց զինքը։

ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն։ և Թուրք։ սոպիկան մը։

ԹՈՒՐՔ ՈՍՏԻԿԱՆ ՄԸ.— Տէր իմ երկու Հայ գիւղացիներ եկած են և կը խնդրեն ձեզ ներկայանալ։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչ՞ է իւրեանց խնդիրքը։

ԹՈՒՐՔ ՈՍՏԻԿԱՆ ՄԸ.— Կարևոր խնդրոյ մը համար է որ եկած են. ուրիշ ոչինչ չ'ըսին։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Թողէք որ մտնեն. (Սոպիկանը կը դէնի։) ինձ այնպէս կը թուի թէ Մուսա պէյի դէմ բողոքողներ պիտի լինին. տեսնենք այժմ խնդիրը կը պարզուի։

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

Նոյն։, ԱՂԱՃԱՆ ԱԼՄԱՍ. (Ֆլոր-ինին խոնարհեցնելով կը մտնեն ներս։)

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ցառաջ եկէք. ինչ՞ է ձեր խընդիրքը։

ԱՂԱՃԱՆ.— Իրաւունք և արդարութիւն խընդրելու եկած ենք։

ԱԼՄԱՍ.— Այո՛. տէր իմ և միանգամայն մեր պատիւը։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչ՞ ըսել կ'ուզէք չեմ կա-

ղոզ հասկնալ. որմէ՞ կը պահանջէք իրաւունք և արդարութիւն. որո՞ւ դէմ է ձեր բողոքը։

ԱՂԱՃԱՆ և ԱԼՄԱՍ.— (Երկուքն։) Մուսա պէյի դէմ։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչ՞ ըրաւ ձեզի Մուսա պէյը։

ԱՂԱՃԱՆ.— Մ՚Հ տէր իմ. Մուսա պէյի ըրածը. չենք կարող մեր բերանովը պատմել. նրա գործած անզթութիւնները, նրա կատարած ոճիրները, երբ մարդ լսէ, կը սոսկայ, և ապշած կը մնայ, եթէ մեր խօսքերուն հաւատարմութիւն կուտաք, պատրաստ եմ՚ք պատմել ինչ որ մեր աչքերով տեսանք, և ինչ որ մեր ձեռքերով չօշափեցինք։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ո՞ր տեղացի է՚ք դուք։

ԱՂԱՃԱՆ.— Ծառանիզ Մշոյ Խարց գիւղացի եմ՚ք. անունս է Աղաճան և այս թշուառ և բռնաբարեալ կինն ալ իմ ամուսինս է։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Բայց դուք սխալ կը գործէ՚ք. դուք պարսկական է՚ք Մուշ երթալ և այնտեղի կառավարութեան յայտնել ձեր ցաւերը. մենք մի ուրիշ գաւառի վրայ իշխելու իրաւունք չ'ունինք. ինչո՞ւ Մուշ չի գացիք։

ԱՂԱՃԱՆ.— Որովհետև մեր թշնամիները այս տեղ կը գտնուին։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչ՞ որ է. ես անպաշտօնական կերպիւ կարող եմ ձեր խօսքերը լսել, եթէ յիրաւի ձեր բողոքը արդար է, և իրաւունք ունիք, այն

ատեն կարող եմ զձեզ Մուշ ուղարկել. պատմէ տեսնեմ ինչոր գիտես։

ԱՂԱՃԱՆ.— ճիշտ 6 շաբաթ առաջ գիշեր մը Մուսա պէյ իր 50 մարդիկներով յարձակեցաւ մեր տան վրայ, և դռները ջախջախելով ներս մըտաւ. առաջին անգամ սպաննեց Ծերունի հայրս, իր այնպէս հրացանով. մենք ամենքնիս ալ քնած էինք. վեր թռանք և փորձեցինք փախչիլ բայց տեսնելով որ ամեն կողմէ շրջապատեալ եմք, ըստիպուեցանք անձնատուր լինիլ, նոյն ատեն Մուսա պէյի մարդիկները սուր 'ի ձեռին լեցուեցան մեր տան մէջ բոլոր դարանները պարպեցին. ինչ որ ունէինք բոլորն էլ առին. յետոյ ամենքնիս ալ դուրս հանեցին. և դրամ պահանջեցին մեզանից. ինչքան որ ունէինք դրամ ամբողջովին տուինք Մուսա պէյի. և 'ի վերջոյ բռնելով իմ 15 տարեկան աղջիկս և այս թշուառ կինս. բռնութեամբ տարին իրենց հետ, նոյն գիշերը առանգումէն երկու ժամ յետոյ կինս վերադարձաւ լկուած և բռնաբարուած Քուրդերէն. իսկ աղջիկս այն օրէ 'ի վեր չեմ տեսած. երեկ իմանալով որ աղջիկս Բաղէշ բերած են, մենք ևս եկանք ձեր վսեմութեան գթութիւնը հայցելու, դուք որ թշուառների հայրն է.ք. դուք միայն կարող է.ք մեր ցաւերը դարմանել. չունինք ուրիշ բարերար մը որ դիմենք անոր։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչպէս որ ըսի ձեզ նախապէս, թէ պաշտօնական կերպիւ ձեր գործին չեմ կարող նայիլ, բայց իմ ձեռքէ եկած օգնութիւնն ալ չեմ զլանար երբէք։ Այո՛, ճշմարիտ է որ ձեր աղջիկը այստեղ կը գտնուի. բայց պէտք է գիտնաք որ նա այժմ թողած է Քրիստոնէութիւնը և իր կամքով ընդունած է Մահմետականութիւնը. այս պարագային դուք երբէք իրաւունք չէ.ք կարող ունենալ պահանջելու զնա. նա այսուհետև կը պատկանի Մահմետականաց։

ԱԼՄԱՍ.— Ցեր իմ, աղջիկս իր կամ.ք չէ ընդունած Մահմետականութիւնը. իսկ եթէ ընդունած է պէտք է գիտնաք որ Մուսա պէյի բռնութիւնը և ճնշումը ստիպած է զինքը կրօնափոխութեան դիմելու։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— Լաւ թող այդպէս լինի, բայց եթէ աղջիկդ ձեր և ուրիշների ներկայութեան խոստովանի թէ ինքը Մահմետական է ալ ևս, այն ատեն ինչ պիտի ըսէ.ք։

ԱՂԱՃԱՆ.— Եթէ նա իր ծնողաց և Հայ քահանայի առջև կը խոստովանի թէ Մահմետական է, ալ ևս կը մերժէ Հայութիւնը. այն ատեն մեր կողմանէ աղջիկը պահանջելը անիրաւութիւն է. եթէ այս օրինական հարցաքննութիւնը կատարէ.ք շատ հնարհակալ պիտի լինինք ձեր արդարադատութենէն։

ԷՖՀԷՄ ՓԱՇԱ.— (Զանգակը կը զարնէ։)

ՏԵՍԻԼ ՁՈՐԲՈՐԴ

ՆԵՐԿԱ ԵՒ ՃԱՖԷՐ։

ՃԱՖԷՐ.— Ինչ կը հրամայէք տէր իմ։

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Ճաֆէր. շուտով գնա՛ Հայոց առաջնորդի մօտ և ըսէ որ անմիջապէս հաւաքելով ժողովոյ անդամ չորպաճիները միասեղ թող գան այստեղ. կարևոր խնդրոյ մը համար այսօր ժողով պիտի գումարի, յետոյ երկու ոստիկանօք գայէք Շէյխ Էմին էֆէնտիի ապարանքը. այնտեղ Խարց գիւղացի մի Հայու աղջիկ կայ. հսկողութեամբ բերէք այստեղ։

ՃԱՖԷՐ.— Պատրաստ եմ ձեր հրամանը կատարելու տէր իմ։ (Կը դիմէ։)

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Ձեր խնդիրքը պիտի կատարուի. ելէք մի քիչ սպասեցէք դրսի սրահը, երբ ժողովը բացուի այն ատեն դուք ևս ներկայ պիտի պիտի գտնուիք։

ԱՂԱՃԱՆ.— Ատուած երկար օրեր պարգևէ ձեզ և մեր բարեխնամ Սուլթանին։ (Աղաճան և Աբմա կը դիմեն։)

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Հաճի Տայիպ էֆէնտի, ես կը կասկածիմ այդ աղջկան վրայ, և կը վախնամ որ ժողովոյ ներկայութեան անհպատ խօսի, և ըսէ թէ ինքը Բրիստոնեայ է և ոչ Մահմետական։

ՀԱՃԻՏԱՅԻՊ.— Այդ անկարելի է. 10 հոգւոյ

ներկայութեան խօստովանեցաւ թէ ինքը ալևս Մահմետականի կը պատկանի. ինչպէս պիտի կարենայ ուրանալ իւր ըսածները. արդէն այս խընդրոյ այնչափ կարևորութիւն տալ պէտք չէ. աշխատելու է ժամ առաջ վերջացնել, և աղջիկը յանձնելու է Մուսա պէյի, որ անմիջապէս ամուսնացնէ իր եղբօր ձեղայիր պէյի հետ։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Կարծեմ ձեղայիր պէյն ալ այս երեկոյ կուգայ Բաղէշ. վաղ առաւօտ ես իմ ձեռօք պիտի կատարեմ նրանց նիքահի արարողութիւնը. այդ վերջանալէ յետոյ նրա ծնողքը թող ագռաւների ագերսագիր տան և պահանջեն իրենց աղջիկը։

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Բաւական է որ իմ առջև աղջիկը խօստովանի իւր կրօնափոխութիւնը. անմիջապէս կը հեռագրեմ Մշոյ կառավարչի գործի էութիւնը։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Ադոր վրայ երբէք մի՛ կասկածիր. նրա սիրտը և հոգին Մուսա պէյի երիտասարդ եղբայրը ամբողջապէս գրաւած է. և բաժնուել նրանից, անկարելի է. որսը թակարթը ինկած է արդէն. . ։

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Կը հաւատամ, զի աշխարհիս վրայ ամենէն զօրաւոր բանը սէրն է որ միշտ յաղթող կը հանդիսանայ ամէն պարագայի մէջ։ (Դիմէն աջմո�կ մը։)

ՏԵՍԻԼ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՆՈՅՆ Ե ՃԱՖԷՐ (ՈՃԱՊԱՐԱՆՈՎ ԿԸ ՄՈՆԷ։)

ՃԱՖԷՐ.— Տէր իմ, Հայոց Առաջնորդը երկու Հայ չորպահիներով եկան և Ձեր Վսեմութեան հրամանին կ'սպասեն, և Շէյխ Էմին էֆէնտիի տունէն Խարց գիւղացի աղջիկն ալ բերուեցաւ երկու ոստիկանաց հսկողութեամբ։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Իմաց տուր Հայոց որ մտնեն. իսկ աղջիկը թող մնայ, երբ կարգը գայ լուր պիտի տրուի անոր։ (ԽՈՓՇԻԿԸ ԿԸ ԴԷՆԷ։)

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Փաշա էֆէնտի գործը կարճ կապելու է, և պէտք չէ թոյլ տալ այդ կեավուրներուն. որ համարձակ խօսին. նրանց որչափ ազատութիւն տաս այնչափ կը յանդգնին համարձակ խօսելու։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Էթհէմ փաշան գիտէ իր գործը ես նրանից շատ վարպետ և խորամանկ եմ։

ՏԵՍԻԼ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆՈՅՆ, ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ, ՄԻՆԱՍ Ե ՅԱԿՈԲ, ՃԱՖԷՐ (ԿԸ ՄՈՆԷՆ։)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— (ՆՈՊՈՃ ՊԷՂԷՆ ՇՐՋԵԼՎԷ) Հրամայեցէք, բարի եկաք, ճաֆէր սուրճ բեր էֆէնտիներուն. (ՃԱՖԷՐ ԿԸ ԴԷՆԷ.) այսօր մի խնդրոյ համար պէտք զգացուեցաւ արտաքոյ կարգի նիստ

մ'ընելու, ասոր համար ստիպուեցայ ղձեղ ալ հրաւիրել որ ներկայ գտնուիք այն ժողովոյ։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Ինչ բանի վրայ է խընդիրը. կարևորութեան արժանի՞է թէ ոչ։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Խնդիրն Մշոյ գիւղերէն Հայ աղջկան մը ինքնայօժար կրօնափոխութեան դիմելն է։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Գիւղացի Հայ աղջի՞կ մը. . . զարմանալի բան, մինչև ցարդ ես կեանքիս մէջ չեմ տեսած որ Հայ գիւղացի աղջիկ մը կրօնափոխութեան դիմէ իր յօժարութեամբ. այն ատեն միայն նա կը դաւանի այլակրօնի երբ իւր վրայ բռնութիւնը և ճնշումը տիրէ։ (ՃԱՖԷՐ ՄԱՊՈՒՅՐԱՆՈՎ ՍՈՒՐՃ ԿԸ ԲԵՐԷ։)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Բայց կ'աղաչեմ սխալ գաղափար է այդ. ուրեմն այդ կարգի խեղճ արարածները բռնի Մահմետականացնելով ինչ արդիւնք յառաջ կարող է դալ, և ինչ ծառայութիւն կարող է մատուցանել աղջիկ մը, կին մը Մահմետական տարրի. մինչդեռ իրենց անձի օգնելու անկարող են։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Եթէ այդպէս է, ուրեմն հարկ չ'կայ կարևորութիւն չ'տալու այդ կարգի խնդիրների. մենք աւելի կարևոր գործեր ունինք զբաղուելու քանթէ առևանգեալ խեղճ Հայուհոյ մը բռնի կրօնափոխութիւնը մէջ բերել և ժողով գումարել. չարժէր որ ժամանակ անցնենք։

ՀԱՃԻ ՏԱՑԻՊ.— Կը բողոքեմ ձեր այդ առարկութեան դէմ. թէ աղջկանը կ'ուզենք բռնութեամբ ընդունել տալ մեր կրօնը. ես ինքս անձամբ երթալով եղելութիւնը ստուգեցի. աղջիկը մի կին կը խրկէ Մուսա պէյի որ գայ զինքը առնանգէ և իւր եղբօրը հետ ամուսնացնէ. նա ալ կը ստիպուի իր մարդիկներէ երկու հոգի ուղարկել որ աղջիկը բերեն. ահա այս է բուն գործին եղելութիւնը։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Հաճի Տայիպ էֆէնտի, Հայերը սովորութիւն ունին ամէն գործի մէջ աղմուկ յարուցանել և կառավարութիւնը գրաղեցնել այդ կարգի չնչին խնդիրներով. և միևնոյն ժամանակ օտար ազգաց ցոյց տալով թէ Հայերը ճնշման և հարստահարութեան կ'ենթարկուին Տաճկաստանի մէջ. ասի խռովութիւն կը համարուի։

ՑՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Կը ներէք, կը ներէք, փաշա էֆէնտի, եթէ մեր ներկայութիւնը վիշտ կը պատճառէ ձեզ (Ոտէ ելլելով) ուրեմն մենք կը պարտաւորինք մեկնիլ ասկից. դուք ձեր ուզածին պէս կարգադրեցէք այս գործը. մենք ձեր արդարասիրութեան վրայ կատարեալ վստահութիւն ունիմք։ (Մէնաս և Ակոբ աղայ ալ ոտէ կ'ելլեն։)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչ կ'ընէք կ'աղաչեմ. առանց ձեր ներկայութեան չենք կարող մենք ո՛չ ժողով բանալ և ո՛չ ալ վճռել, արդէն ինչպէս որ գիտէք այս խնդիրը Հայոց կը վերաբերի, կ'աղաչեմ եթէ

իմ խօսքերս ձեր սրտին վատ ազդեցութիւն ունեցան, ներողամտութիւնդ կը խնդրեմ այս մասին։

ԱԿՈԲ ԱՂԱ.— Կ'աղաչեմ հայր սուրբ այն որ եկած եմք սա խնդիրը փակենք։

ՄԻՆԱՍ ԱՂԱ.— Այո՛, ես ալ կը խնդրեմ Ձեզ որ բարեհաճիր ներողամիտ լինել, լաւ գիտէք որ այսպիսի ժողովների մէջ երբեմն կը պատահին ընդդիմախօսութիւններ. կարևորութիւն պէտք չէ տալ։

ՏԵՍԻԼԵՕԹՆԵՐՐՈՐԴ

(Նոյն, Պէքիր և Սիւլէյման աղայ (կը մտնեն, ժողովը դրջեն աթոռը ոտէ կ'ելլեն։)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Հրամայեցէք աղաներ. բարի եկաք։

ՊԷՔԻՐ.— Շնորհակալ եմ։

ՍԻՒԼԷՅՄԱՆ.— Շնորհակալ եմ. մի քիչ ուշացանք բայց կը յուսամք թէ ներողամիտ կը լինիք մեզ։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Պարապ խօսքերով ժամանակ չանցնենք, փաշա էֆէնտի հրաման ըրէք որ աղջիկը բերուի և սկսի ժողովը. մեր փափաքն է արդարութիւնը և կամ անիրաւութիւնը յայտնուի. և լոյսի նման պայծառ երևի մեր ամենուս առջև. Օսմանեան կառավարութիւնը միշտ ցանկացող է արդարասիրութեամբ վարուիլ իւր ամեն հպատակների հետ. հաւասարաբար գոհացնէ նրանց ամենայն կերպիւ։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— (Զանգակը կը զարնէ։) Դուրսը սպասող Խարց գիւղացի Հայ աղջիկը բերէք շուտով։

ՑՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Փաշա էֆէնտի. եթէ կարելի է հրաման ըրէք որ աղջկան հայրը և մայրը ասա ներկայ գտնուին։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Արդէն ձեզանից առաջ նրանք ներկայացան մեզ, և ես հրաման տուի որ չի հեռանան և դուրսը սպասեն մինչև որ ժողովը գումարի։

ՑՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Գահ և ուրախ եմ ձեր կարգադրութենէն։

ՏԵՍԻԼ ՈՒԹԵՐՈՐԴ

Նոյն + Ե ԿԻՒԼԻՒԶԱՐ (դէմդը ծանակոտած դ սպիտակ հագուստ)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— առաջ եկուր աղջիկս, քեզ կը հրամայեմ որ այս տեղ ազատ և համարձակ խօսիս։ ինչ՞ որ պիտի հարցուի քեզ պէտք է ճշմարտութիւնը խօստովանիս։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Պատրաստ եմ ամենայն ճշմարտութեամբ պատասխանելու ձեր հարցումներին. (Իր ըներքը դէմ ելնելվ) բայց կը խնդրեմ արդարասէր ժողովէդ որ եթէ կարելի է ծնողքս ալ այստեղ ներկայ գտնուին որպէսզի իմ պատասխաններս նրանք ալ լսեն։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ձեր առաջարկը ընդունելի է աղջիկս, (Զանգակը կը զարնէ, ձայնը կը մօտենայ։) Խարց

գիւղացի այր և կին երկու Հայեր կան դուրսը սպասող, շուտով բերէք (ձայնը կը դադրի.) (Մեկնելի.) ա՜հ, եթէ միանգամ լսեմ աղջկան բերնէն թէ կ'ընդունի Մահմետականութիւնը այն ատեն յաղթութիւնը իմս պիտի լինի։

ՏԵՍԻԼ ԻՆՆԵՐՐՈՐԴ

Նոյն +, ԱՂԱՃԱՆ Ե ԱԼՄԱՍ

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ահաւասիկ, աղջիկս ըստ փաքանայդ ծնողքդ եկան. այժմ ասա ինձ թէ Մուսա պէյ ինքը անձամբ եկա՞ւ ձեր տունը և բրոնութեամբ առևանգե՞ց քեզ, թէ նախապէս իմաց տուած էիր նրա որ գայ և զքեզ առնու իւր եղբօր ձեզայիր պէյի կնութեան համար, պատասխանէ մի՛ վախնար, ինչ որ տեսար, ինչ՞ որ գիտես համարձակօրէն ասա՛։

ԿԻՒԼԻՒԶԱՐ.— Այժմ լսեցէք ինձ ամենքնիդ ալ և ճշմարիտ վկայ եղիք իմ խօստովանութեանս, և եթէ մի բառ իմ կողմանէ աւելցնեմ թող Աստուծոյ ծառան չը լինիմ ես, և իմ հոգին թող տանջուի դժոխքի բոցերուն մէջ, ուրեմն լսեցէք ինձ։ Մուսա պէյ, այն սարսափելի եղեռնագործը, այն անգութ մարդասպանը, իր 60 հոգւոյ չափ արբանեակներով գիշեր ատեն յարձակեցաւ մեր տանը վրայ, առանց նախապէս ձայն տալու մեր տանը դռները խորտակելով յաջողեցաւ ներս մըտ-

նել. իմ ալևոր պապս 80 ամեայ ծերունի Յակոբը սպաննեց Մուսա պէյ իր հրացանով, յետոյ իր արբանեակները անպատմելի կատաղութեամբ զէն 'ի ձեռին լեցուեցան մեր տանը սենեակների մէջ. և բռնելով զմեզ բերին Մուսա պէյի մօտ. հօրեղբայրս Ռէս Միրօն բռնեցին և պահանջեցին դրամ. խեղճը իր բոլոր հարստութիւնը յանձնեց Մուսա պէյի, այս գործողութիւնները աւարտելէ յետոյ մայրս և ինձ ուզեց տանիլ իր հետ, մենք սկսանք արտասուք աղաչել և պաղատիլ. բայց 'ի զուր, ամենքնիս ալ մերկ և բոպիկ էինք. բռնելով թշուառ մօրս և իմ գիսակներից անդթօրէն, առնելով իւր հետ տարաւ, ճանապարհի վրայ Քուրդերը բռնաբարեցին խեղճ մայրս և աղաս թողուցին. իսկ ինձ տարաւ Մուսա պէյ Ծընդաղբար գիւղ և այնտեղ բռնաբարեց կուսութեանդս պատիւը. ահա այս է բոլոր ճշմարտութիւնը որ կը խոստովանիմ։

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— (Մեկ-ոռ է) Սոսկալի հարուած։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— (Մեկ-ոռ է) Յաղթեցի՜...

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Դու նախապէս կը ճանաչէի՞ր Մուսա պէյը և եղբայրը ձեզայիր պէյը։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Այո, կը ճանաչէի. նոքա շատ անգամներ կուգային մեր բնակարանը և օրերով հիւր կը լինէին մեզ. բայց ես այդ կարգի ինքնակոչ հիւրեր երբէք չէի սիրեր անոր համար որ և է յարաբերութիւն չունէի նրանց հետ։

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Այդմ ասա ինձ ճշմարիտը. դու կը սիրե՞ս ձեզայիր պէյը։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ո՛չ երբէք. կ'ատեմ զինքը փոխարէն սիրելու։

ԷՄՀԷՄ ՓԱՇԱ.— Եւ ինչո՞ւ համար նախապէս ընդունած ես Մահմետականութիւնը և այժմ կ'ուրանաս վատաբար։

ԿԻՒԼԻՒՋԱՐ.— Ինչ. ես ընդունիմ Մահմետականութիւնը. թողու՞մ Քրիստոսի լոյս հաւատքը. ուրանա՞մ, իմ սիրելի թշուառ հայրս ու մայրս. երբէք. երբէք. ահա՛ այս լաթի կտորը որ երբև Մահմետականուհի իմ գլուխս փաթաթեցին, ահաւասիկ կը պատառեմ զայն, և կը վերադարձնեմ ձեզ։ (Գլխէ լաթը կը պոռոռէ և կը նետէ գետին։) ես իմ հաւատոյս և կրօնիս հաւատարիմ կը մնամ մինչև վերջին շունչս. և Ձեր արդարադատութեան ապաստանելով ճակատաբաց կը նեռուիմ իմ ծընողաց գերկը. (Մօտենալով հօրը կը գրկէ զայն) մայր իմ գրկէ քու կորուսեալ և բռնաբարեալ աղջիկդ. այնչափ տառապանք. այնչափ տանջանք կրելէ յետոյ ահա քու հաւատարիմ աղջիկդ դարձեալ կուգայ և իւր վշտակոծ գլուխը կը հանգչեցնէ քաղցրիկ գրկացդ մէջ։

ԱԼՄԱՍ.— Օրհնեալ լինիս զաւակս, ա՜հ. երբէք յոյս չունէի որ կրկին պիտի գտնեմ զքեզ։

ԿԻԼԻԶԱՐ.— (Դէմ-դէմ է-ր հօրը) Եկուր. զքեզ ալ գրկեմ մի անգամ խեղճ և վշտահար հայր, զքեզ ալ գրկեմ, գուցէ վերջինը լինի այս։

ԱՂԱՃԱՆ.— (Կո-ղայ) Ա՜հ, աղջիկս, այս ինչ՞ դըժ-բաղդութիւն է որ պատահեցաւ մեզ, իցի՜ թէ իմ ալևոր հօրս փոխարէն զիս սպաննէր Մուսա պէյ. զքեզ այժմ այս ցաւալի վիճակի մէջ չի տեսնէի։

ՀԱՃԻ ՏԱՅԻՊ.— Ստախօս և խաբեբայ աղջիկ. միթէ՞ կը մոռանաս թէ մեր ներկայութեան խոստովանեցար և ընդունեցիր Մահմետականութիւնը, միթէ՞ դու քու բերնով չի յայտնեցիր մեզ թէ 'ի բոլոր սրտէ կը սիրես ճէզայիր պէյը. և կը փափաքիս ամուսնանալ նրա հետ, և այժմ ալ կ'ուրանաս վատաբար. խայտառակելով զմեզ այս ժողովոյ մէջ. լաւ գիտցիր որ անպատիժ չ'պիտի մը-նաս դու։

ԿԻԼԻԶԱՐ.— Եթէ այնչափ բռնութեան ներ-քև զքեզ ալ ճնշէին և չարչարէին, դու ևս կը խոստովանէիր թէ կը թողուս կրօնքդ, և կ'ընդունիս Քրիստոնէութիւնը. ինչ՞, միթէ յանցանք մ'է այն մարդուն որ իւր կեանքը և հոգին ազատելու համար առաջին անգամ սուտ կը խօսի և կը խաբէ իւր դիմայինը. կարծեմ Աստուած ալ թողութիւն կուտայ ինձ նման անմեղ ստախօսի մը։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Դուք ինչ՞ կարծիք ունիք այս մասին, Սիւլէյման և Պէքիր աղայք։

ՊԷՔԻՐ.— Այն որ նախապէս խոստովանած է իւր կրօնափոխութիւնը պէտք է յանձնել Մուսա պէյի։

ՍԻԼԷՅՄԱՆ.— Այո՛, ճշմարտութիւնը այդպէս կը պահանջէ փաշա էֆէնտի։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ձեր կարծիքը ինչ՞ է առաջ-նորդ էֆէնտի։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Իմ կարծիքս այն է որ աղջիկը պէտք է յանձնել իւր ծնողաց։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— (Ակոբ և Մինաս ո-ղղէլով խօսէր.) Իսկ Ձեր կարծիքը՞։

ԱԿՈԲ.— Աղջիկը յանձնել իւր ծնողաց։

ՄԻՆԱՍ.—Այո՛. ազատ թողուլ աղջիկը. և պատ-ժել յանցաւորը։

ՏԵՍԻԼ ՏԱՄՆԵՐՐՈՐԴ

Նոյն և ՃԱՖԷՐ (Ռո-ղն մը Բէրբէլով կո-ղայ էշլէն։)

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Հեռագիր մը... (Կը Բանայ)... Մշոյ կուսակալէն... մտիկ ըրէք ուրեմն... "—Ներ-քին գործոց նախարարէ ստացայ մի հեռագիր, որ կը հրամայէ, Խարբ գիւղացի Կիւլիւզար անուն աղ-ջիկը իր ծնողաց հետ միասին անմիջապէս Պոլիս խրկուի իւր դատը տեսնուելու համար, ուստի կը խնդրեմ որ բարեհաճիք այդ տեղ դանուող Խարբ գիւղացի աղջիկը իւր ծնողաց հետ ճամբայ դնէք։ Սորագրութիւն... Ահմէտ փաշա..." ահաւասիկ Ձեր դատը պիտի տեսնուի Կ.Պոլսոյ մէջ. առաջնորդ

էֆէնտի. այժմ Ձեզ կը յանձնեմ այս մարդիկը, և դուք ալ վաղ առաւօտ ասկից ճամբայ կը դնէք դէպի Կ.Պոլիս, այնտեղ կը յայտնուի և յանցաւորը ամենայն անաչառութեամբ դատուելով իր պատիժը կ'ընդունի։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— Փաշա էֆէնտի լաւ գիտցէք որ այս գործին մէջ Նախախնամութեան մատը կայ. ես ալ համամիտ եմ Ձեր վսեմութեան. պէտք է յանցաւորը իր արժանաւոր պատիժը կրէ և անմեղը ազատուի. արդարութիւնն է որ կը յաղթէ ամէն բանի։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Ինչպէս որ ըսի դուք այս օրից ներանց ամբողջութիւնը դիւրացնելու համար պէտք եղած կարգադրութիւնները ըրէք, ես այս վայրկեանիս կը հեռագրեմ ներքին գործոց նախարարի թէ Խարբ գիւղացիք ճանապարհ դրուած են։

ՄԻՆԱՍ ԱՂԱ.— Կեցցէ մեր բարեխնամ Սուլթանը որ հոգ կը տանի իւր Քրիստոնեայ հպատակաց վերայ։

ԱԿՈԲ ԱՂԱ.— Ատուած երկար օրեր պարգևէ մեր գթասիրտ Սուլթանին։

ՅՈՎՍԷՓ ՎԱՐԴԱՊԵՏ.— (Ոտէ էլէ լով Նոյնպէս Ակոբ և Մինաս։) Մնաք բարեաւ։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— (Հայոց) Ալ ասկից յետոյ գործ չունիք այս տեղ. գացէք Ձեր առաջնորդի եռևէն. (Կը հեռանան Յովսէփ Վարդապետ.) տեսաք ուրեմն, ահա

ասի մի լաւ ապտակ է, որ տուին մեզ այդ անհաւատները. ես նախապէս գուշակեցի թէ գործը այս կերպով պիտի վերջանայ։

ՇԷՅԽ ԷՄԻՆ.— Մի՛ վհատիք դուք փաշա էֆէնտի, ասկից յետոյ Քուրդ տարրը պէտք է մի սերտ դաշնակցութեամբ միանայ կառավարութեան հետ, և գաղտնի ծրագրով գործէ ընդդէմ Հայոց. ես հազարաւոր մարդիկ ունիմ իմ ձեռքիս տակ. եթէ մէկ հրաման տամ ամբողջ Բաղիշու գիւղերը կարող են զարնել, և մէկ Կիւլիւզարի փոխարէն հարիւրաւոր աղջիկներ Մահմեդականացնել. եթէ ես իմ վրէժը չառնում այդ անհաւատներէ դուք ալ ինձ Շէյխ Էմին մի՛ կոչէք։

ԷԹՀԷՄ ՓԱՇԱ.— Այդ մասին կը խորհրդակցինք. ես ալ համամիտ եմ ձեզ։

ՇԷՅԻ ԷՄԻՆ.— Դուցայէք Հայեր. Շէյխ Էմին և Էթհէմ փաշա ձեռք ձեռքի տուին։

ՎԱՐԱԳՈՅՐԸ Կ'ԻՋՆԷ

-ՎԵՐՋ-

ՀԱՍ 205

«Ազգային գրադարան»
NL0251071